Հավելված
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի -------------------
N--Ն որոշման

« Հավելված
Հաստատված է ՀՀ հանրային
ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2019 թվականի դեկտեմբերի 25-ի
N516Ն որոշմամբ

# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ

## ԲԱԺԻՆ 1

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1 ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (այսուհետ նաև ԷՄՇ) կառուցվածքը, գործունեության սկզբունքները, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակցի գրանցման կարգը, առևտրի իրականացման կանոնները, Հայտերի ներկայացման կանոնները, էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման կանոնները, ուղիղ պայմանագրերի, օր-առաջ և հաշվեկշռման շուկաների գործունեության կարգը, էլեկտրական էներգիայի, հզորության, Համակարգային ծառայությունների մատուցման և վճարման ընթացակարգերը, ԷՄՇ-ում տվյալների պահպանմանը և թափանցիկությանը ներկայացվող պահանջները, ԷՄՇ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը, ինչպես նաև ԷՄՇ-ի կազմակերպման, դրա բնականոն և արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ այլ կանոններ:
2. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

| | |
|---|---|
| 1) **Առևտրային (Հաշվարկային) ժամանակահատված՝** | 60 րոպե տևողությամբ ժամանակահատված. |
| 2) **Առևտրային հաշվառում՝** | ԷՄՇ մասնակիցների առևտրային փոխհարաբերություններում վճարման ենթակա էլեկտրական էներգիայի (հզորության) |

քանակների և մատուցված ծառայությունների հաշվառում.

| | |
|---|---|
| 3) **Առևտրային հաշվիչ՝** | ԷՄՇ պայմանագրում ամրագրված էլեկտրական էներգիայի (հզորության) առևտրային հաշվառման հաշվիչ. |
| 4) **Առևտրային օր (ՕՐԱ)՝** | Ժամը 00:00-ին սկսվող և 23:59-ը ներառյալ ավարտվող հաջորդական Առևտրային ժամանակահատվածներից բաղկացած ժամանակահատված. |
| 5) **Արտադրող՝** | Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձ, որը գտնվում է արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածում. |
| 6) **Արտահանման կետ՝** | Միջհամակարգային էլեկտրահաղորդման գծի՝ պետական սահմանի հատման կետ, որտեղից իրականացվում է էլեկտրական էներգիայի արտահանումը. |
| 7) **Բաշխման ցանց՝** | Բաշխողի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների և այլ սարքավորումների միասնական համակարգ. |
| 8) **Բաշխման ցանցային կանոններ՝** | Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններ. |
| 9) **Բաշխող՝** | Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձ. |
| 10) **Գաղտնապահական տեղեկատվություն՝** | ԷՄՇ մասնակցի ֆինանսական վիճակի և/կամ առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվություն կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել վերջիններիս, ինչպես նաև սպառողներին վերաբերող՝ ԷՄՇ մասնակցի մոտ առկա տեղեկությունները. |

| | |
|---|---|
| **11) Գործարք՝** | Էլեկտրական էներգիայի առևտրի վերաբերյալ ԷՄՇ բոլոր հատվածներում և բաղադրիչներում ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև կնքվող համաձայնություն, կամ ԷՄՇ մասնակցի կողմից էլեկտրական էներգիայի արտահանման կամ ԷՄՇ-ում վաճառքի կամ սեփական պահանջարկի բավարարման նպատակով էլեկտրական էներգիայի ներկրման վերաբերյալ օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձի կնքվող ուղիղ պայմանագիր. |
| **12) Երաշխավորված մատակարար՝** | էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ. |
| **13) Էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշիռ (ԷՀՏՀ)՝** | Էլեկտրական էներգիայի սպառման, կորուստների և սեփական կարիքների, արտադրության, արտահանման և ներկրման Կանոններով սահմանված կանխատեսվող տարեկան ցուցանիշների համախումբ. |
| **14) ԷՄՇ մասնակիցներ՝** | Արտադրող, Երաշխավորված մատակարար, Մատակարար, Մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձ, Որակավորված սպառող, Հաղորդող, Բաշխող, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատոր. |
| **15) ԷՄՇ առևտրի մասնակիցներ՝** | Արտադրող, Երաշխավորված մատակարար, Մատակարար, Մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձ, Որակավորված սպառող, ինչպես նաև Հաղորդող ու Բաշխող՝ սեփական կարիքների և կորուստների փոխհատուցման նպատակով գնվող էլեկտրաէներգիայի մասով. |
| **16) ԷՄՇ պայմանագիր՝** | ԷՄՇ-ին մասնակցելու նպատակով ԷՄՇ մասնակիցների միջև կնքվող պայմանագիր. |
| **17) Ինքնավար էներգաարտադրող (ԻԷԱ)՝** | Սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի տեղակայանքների դրվածքային հզորությունը. չի գերազանցում էլեկտրական էներգիայի իր |

սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի քան Էներգետիկայի մասին օրենքով (այսուհետ՝ Օրենք) ամրագրված հզորությունը,

**18) Կարգավարական հրահանգ՝** Համակարգի օպերատորի կողմից Հաղորդման ցանցային կանոններով և Կանոններով նախատեսված դեպքերում տրվող հրահանգ.

**19) ՀԱԻՐ՝** Միջհամակարգային միացում, որը ներառում է Հայաստանի և Իրանի էլեկտրաէներգետիկական համակարգերը միացնող բարձրավոլտ հաղորդման գծեր և համապատասխան սարքավորումներ.

**20) Հաղորդման ցանց՝** Հաղորդողի կողմից կառավարվող և շահագործվող էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի (ենթակայանների և այլ սարքավորումների) միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան հաղորդվում է բաշխման ցանց, սպառողին, արտահանվում (ներկրվում) և (կամ) տարանցվում են երրորդ երկիր.

**21) Հաղորդող՝** էլեկտրական էներգիայի հաղորդման լիցենզիա ունեցող անձ.

**22) Հաղորդման ցանցային կանոններ՝** Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոններ.

**23) Համակարգային ծառայություններ՝** էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և անվտանգ աշխատանքի համար Հաղորդման ցանցային կանոններով սահմանված՝ կարգավորվող գներով ձեռք բերվող ծառայություններ.

**24) Համակարգի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձ.

| | |
|---|---|
| 25) Հայտ՝ | Կանոնների համաձայն ներկայացված՝ էլեկտրական էներգիայի գնման և/կամ վաճառքի առաջարկ. |
| 26) Հանձնաժողով | Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. |
| 27) Հաշվառման կետ՝ | ԷՄԾ պայմանագրում ամրագրված առևտրային և վերստուգիչ հաշվառքի կետեր. |
| 28) Հաշվառման համալիր՝ | Մեկ միակցության սարքվածքների համախումբ, որը նախատեսված է էլեկտրաէներգիայի (հզորության) չափման և հաշվառման համար (հոսանքի և լարման տրանսֆորմատորներ, էլեկտրական էներգիայի հաշվիչներ, իմպուլսային տվիչներ, մոդեմներ, գումարիչներ և դրանց միացնող հաղորդալարեր՝ իրար հետ միացված նախագծով հաստատված սխեմայով). |
| 29) Հաշվառման տվյալ՝ | Առևտրային հաշվիչով հաշվառված և գրանցված էլեկտրական էներգիայի քանակ. |
| 30) Հաշվառված էլեկտրական էներգիա՝ | Էլեկտրական էներգիայի քանակ, որը հաշվառվել է Հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում. |
| 31) Հաշվառքի սարք՝ | Չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված էլեկտրական էներգիայի հաշվիչ կամ էլեկտրական էներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների միացությունների համախումբ. |
| 32) Հաշվեկշռման ծառայություն՝ | Հաղորդման ցանցային կանոններով նախատեսված Համակարգային ծառայության տեսակ |

| | |
|---|---|
| **33) Հաշվեկշռման շուկա (ՀՄՇ)՝** | ԷՄՇ-ի հատված, որում իրականացվում է հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առևտուրը. |
| **34) Հաշվեկշռող էլեկտրական էներգիա՝** | Իրական ժամանակում էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավարման արդյունքում էլեկտրական էներգիայի ուղիղ պայմանագրերի և օր առաջ շուկաներում վաճառված և գնված էլեկտրական էներգիայի քանակի տարբերությունը միևնույն Հաշվարկային ժամանակահատվածում փաստացի առաքված և ստացված (ներառյալ՝ ներկրված և արտահանված կամ տարանցիկ փոխադրված) էլեկտրական էներգիայի քանակից, որը որոշվում է Կանոններով սահմանված կարգով. |
| **35) ՀԱՎՐԱ՝** | Միջհամակարգային միացում, որը ներառում է Հայաստանի և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը միացնող բարձրավոլտ հաղորդման գծեր և համապատասխան սարքավորումներ. |
| **36) Մանրածախ շուկայի առևտրային կանոններ՝** | Հանձնաժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններ. |
| **37) Մատակարար՝** | Էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձ. |
| **38) Ներկրման կետ՝** | Միջհամակարգային էլեկտրահաղորդման գծի՝ պետական սահմանի հատման կետ, որտեղից իրականացվում է էլեկտրական էներգիայի ներկրումը. |
| **39) Շուկայի կառավարման ծրագրի (ՇԿԾ) օգտատեր՝** | ԷՄՇ մասնակցի, բացառությամբ Շուկայի օպերատորի կողմից նշանակված անձ (անձինք). |

| | |
|---|---|
| **40) Ցուկայի օպերատոր՝** | Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ. |
| **41) Որակավորված սպառող՝** | Կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով Ցուկայի օպերատորի կողմից ճանաչված սպառող. |
| **42) Ուղիղ պայմանագրերի շուկա՝** | ԷՄՑ-ի հատված, որում էլեկտրական էներգիայի առևտուրն իրականացվում է ԷՄՑ առևտրի մասնակիցների միջև կնքված էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի ուղիղ պայմանագրերի հիման վրա. |
| **43) Պայմանագրային հզորություն՝** | ՊԷԱ կայանի և Երաշխավորված մատակարարի միջև կնքված պայմանագրում տարեկան (ըստ ամիսների) ամրագրվող հզորություն. |
| **44) Սահմանազատման կետ՝** | ԷՄՑ մասնակցի էլեկտրակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման. |
| **45) Վերստուգիչ հաշվիչ՝** | ԷՄՑ պայմանագրում ամրագրված էլեկտրաէներգիայի վերստուգիչ հաշվառման հաշվիչ. |
| **46) Տարանցում՝** | Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրում՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին. |
| **47) Տնօրինելի հզորություն՝** | Համակարգի օպերատորի կողմից կարգավարման ենթակա առավելագույն հզորություն, որը որոշվում է Պայմանագրային հզորությունից նվազեցնելով ՋԷԿ-երում և ՀԱԷԿ-ում՝ բնակլիմայական գործոններով (արտաքին օդի ջերմաստիճան, խոնավություն, տեղակայման վայրի բարձրություն), ՀԷԿ-երում՝ ջրի ելքով և էջքով, ինչպես նաև հիմնական սարքավորումների ընդհանուր մաշվածությամբ, ջերմային բեռնվածքով և մնացորդային ֆիզիկական ռեսուրսներով |

| | |
|---|---|
| | պայմանավորված հզորությունների սահմանափակումները. |
| 48) **Քլիրինգային գին՝** | Առևտրային օրվա յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար Օր առաջ շուկայում ձևավորված գին. |
| 49) **Օր առաջ շուկա (ՕԱՇ)՝** | ԷՄՇ հատված, որում էլեկտրական էներգիայի առևտուրն իրականացվում է էլեկտրական էներգիայի փաստացի մատակարարման օրվանը նախորդող օրը կնքած Գործարքների հիման վրա: |

## ԳԼՈՒԽ 2 ԷՄՇ-Ի ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3. Կանոնների համաձայն ԷՄՇ-ի նպատակներն են.
   1) ապահովել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի աստիճանական ազատականացումը՝ սահմանելով էլեկտրաէներգիայի առևտրի ճկուն մեխանիզմներ,
   2) նպաստել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի մրցունակությանը և ներդրումային միջավայրի բարելավմանը,
   3) ստեղծել ԷՄՇ-ի գործունեության թափանցիկ և մրցակցային պայմաններ՝ խթանելով նոր մասնակիցների մուտքը մեծածախ շուկա,
   4) խթանել միջպետական առևտուրը:
4. ԷՄՇ-ն հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.
   1) էլեկտրական էներգիայի առևտրի իրականացում ԷՄՇ տարբեր հատվածներում,
   2) ԷՄՇ-ի չկարգավորվող հատվածներում տնտեսական մրցակցության պայմանների ապահովում,
   3) ԷՄՇ մասնակցի կողմից Կանոններով և Գործարքներով սահմանված պարտավորությունների խախտման, ինչպես նաև անհաշվեկշռույթների համար պատասխանատվության մեխանիզմների կիրառում,
   4) տարածաշրջանային էլեկտրահամակարգերի հետ էլեկտրական էներգիայի ներկրման, արտահանման, տարանցման, փոխհոսքի համար թափանցիկ ու ոչ խտրական պայմանների սահմանում,
   5) էլեկտրական էներգիայի արտահանում միայն ներքին սպառման պահանջարկի բավարարումից հետո,
   6) ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին ներկայացված տեղեկատվության հավաստիություն և հասանելիություն,

7) ՎԷԱ և ԻԷԱ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության խրախուսում,
8) ԷՄՇ-ում Հաղորդման և Բաշխման ցանցերին ոչ խտրական մուտքի իրավունքի ապահովում:

## ԳԼՈՒԽ 3 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

5. ԷՄՇ մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև փաստաթղթերի հանձնումն իրականացվում է պատշաճ ձևով՝ Կանոնների 6-րդ կետով սահմանված կարգով:
6. Կանոնների շրջանակում ԷՄՇ մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև փաստաթղթերի հանձնումը համարվում է պատշաճ ձևով կատարված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ (այդ թվում՝ ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով), կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով կամ հանձնվել են ստացականով, եթե Կանոններով տեղեկացման կամ փաստաթղթերի հանձնման այլ ձև նախատեսված չէ: ՇԿԾ-ի միջոցով ծանուցման դեպքում Շուկայի օպերատորին ներկայացված տեղեկատվությունը համարվում է ծանուցված տվյալ մասնակցի կողմից ԷՄՇ մյուս բոլոր մասնակիցներին, ում դա կարող է լինել վերաբերելի:
7. ԷՄՇ մասնակիցը պատասխանատվություն է կրում ԷՄՇ-ում իր ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
8. ԷՄՇ մասնակցի տրամադրած տեղեկատվությունը, որում հայտնաբերվել են սխալներ, այն հայտնաբերողի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է ուղղելու իրավասություն ունեցող անձին, որն էլ համապատասխան ուղղումը կատարում է այդ մասին տեղեկացվելուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
9. Կանոններով նախատեսված դեպքերում Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորն ապահովում են ԷՄՇ առևտրի մասնակցի ներկայացված տեղեկատվության ամբողջական հրապարակումը ՇԿԾ-ում:
10. ԷՄՇ մասնակիցը պատասխանում է մյուս մասնակիցների հարցումներին, դիմումներին, բողոքներին կամ առաջարկություններին այն ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար Կանոններով այլ ժամկետ սահմանված չէ:
11. ԷՄՇ մասնակիցների կողմից միմյանց ներկայացվող տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն օրենքի համաձայն կամ ներկայացրած անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «Գաղտնապահական տեղեկատվություն»՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների:
12. ԷՄՇ մասնակիցն իրավասու է բացահայտել գաղտնիք պարունակող տեղեկատվությունն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով և պատասխանատվություն է կրում

տեղեկատվության գաղտնիության վերաբերյալ օրենսդրության պահանջների խախտման համար:

13. Կանոններով նախատեսված ցանկացած գրառում կամ փաստաթուղթ պետք է պահպանվի առնվազն հինգ տարի ժամկետով, բայց ոչ պակաս, քան տվյալ տեսակի փաստաթղթերի պահպանության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետով:

## ԳԼՈՒԽ 4 ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

14. Հաղորդման ցանցային կանոններով սահմանված դեպքերում, երբ հայտարարվել է վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ ԷՄՇ մասնակիցները գործում են բացառապես Համակարգի օպերատորի կարգավարական հրահանգներով: Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ամբողջ ժամանակահատվածում Գործարքների հիման վրա ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ դադարում են և դրանց խախտման համար Կանոններով սահմանված պատասխանատվության միջոցները չեն կիրառվում:
15. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի վաճառքն իրականացվում է Հանձնաժողովի կողմից Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար սահմանած առավելագույն գնով, բացառությամբ այն կայանների, որոնց համար Հանձնաժողովը սահմանել է սակագին: Այդ կայանների դեպքում էլեկտրական էներգիայի վաճառքն իրականացվում է Հանձնաժողովի սահմանած սակագնով: Նույն ժամանակ էլեկտրական էներգիայի գնումն իրականացվում է փաստացի ձևավորված՝ էլեկտրական էներգիայի վաճառքի միջին կշռված գնով:
16. Համակարգի օպերատորի կողմից Վթարային կամ անհաղթահարելի իրավիճակի ավարտի և Շուկայի օպերատորի կողմից առևտրի վերսկսման ժամկետի հայտարարումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, Շուկայի օպերատորը՝ համագործակցելով Համակարգի օպերատորի հետ, ԷՄՇ մասնակիցների և Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ԷՄՇ մասնակիցների կողմից փաստացի մատուցված ծառայությունների, ինչպես նաև փաստացի առաքված (գնված) էլեկտրական էներգիայի արժեքի վերաբերյալ իր հաշվարկները (այսուհետև՝ ՎԱԻ հաշվարկ)՝ համաձայն Կանոնների 15-րդ կետի:
17. Կանոնների 16-րդ կետի համաձայն Շուկայի օպերատորի կողմից ՎԱԻ հաշվարկը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը և ԷՄՇ մասնակիցները Շուկայի օպերատորին գրավոր ներկայացնում են դրա վերաբերյալ իրենց եզրակացությունները: ՎԱԻ հաշվարկի արդյունքների հետ համաձայն լինելու դեպքում Շուկայի օպերատորն այն ներբեռնում է ՇԿԾ, իսկ վեճերի և տարաձայնությունների դեպքում ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոններով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 5 ԷՄԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՃԵՐԻ (ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԼՈՒԾՈՒՄԸ

18. ԷՄԾ մասնակիցը Կանոնների դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում Օրենքով և ԷՄԾ պայմանագրով սահմանված կարգով:
19. ԷՄԾ մասնակիցը Կանոններով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չի կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի:
20. Սույն գլխով ֆորս մաժորի վերաբերյալ կանոնները չեն գործում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում:
21. Կանոնների իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) Կանոններով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
    1) չի գտնվում ԷՄԾ մասնակցի վերահսկողության ներքո,
    2) ԷՄԾ մասնակիցը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար:
22. Կանոնների իմաստով ֆորս մաժոր են ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝
    1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները,
    2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումներ, զինված հակամարտություններ, արտաքին թշնամու գործողություններ կամ շրջափակում, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել,
    3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունն այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել պայմանագրային պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ ԷՄԾ մասնակիցը գործել են համաձայն օրենսդրության:
23. Ֆորս մաժոր առաջանալու դեպքում ֆորս մաժորի ազդեցության ներքո գործող ԷՄԾ մասնակիցը մյուս կողմին այդ մասին իրազեկում է հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան Ֆորս մաժոր համարվող հանգամանքն առաջանալուց հետո 10 օրվա

ընթացքում, բացառությամբ երբ տվյալ ԷՄՇ մասնակիցը չի հիմնավորում այդ ժամկետի բաց թողումը։

24. ԷՄՇ մասնակիցների միջև առաջացող բոլոր վեճերը (տարաձայնությունները) կարգավորվում են բանակցությունների միջոցով։
25. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորն իրենց իրավասությունների շրջանակում նպաստում են առաջացող վեճերի (տարաձայնությունների) արտադատական կարգավորմանը։
26. Վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով, ինչպես նաև վեճի լուծումը հանձնել իրավասու դատարան, եթե կողմերի համաձայնությամբ չի որոշվել գործը հանձնել արբիտրաժի լուծմանը։

# ԲԱԺԻՆ 2

# ԷՄՇ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԷՄՇ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

## ԳԼՈՒԽ 6 ԷՄՇ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

27. ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի առևտուրն իրականացվում է ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև Կանոնների համաձայն կնքված Գործարքների հիման վրա։
28. ԷՄՇ-ում Արտադրողները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝
    1) Պետություն-Մասնավոր գործընկերության պայմանագրերի (այսուհետ ՊՄԳ) շրջանակում գործող Արտադրողներ (այսուհետ՝ ՊԷԱ կայաններ).
    2) մինչև 30 ՄՎտ հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայաններ, որոնք ունեն Օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք, բացառությամբ ՊԷԱ կայանների (այսուհետ՝ ՎԷԱ կայաններ).
    3) սակագնային կարգավորման ենթակա Արտադրողներ, բացառությամբ ՊԷԱ կայանների, ՎԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի (այսուհետ՝ ԿԷԱ կայաններ).
    4) մրցակցային պայմաններով գործող Արտադրողներ (այսուհետ՝ ՄԷԱ կայաններ), այդ թվում՝
        ա. ջերմային էլեկտրակայաններ,
        բ.էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիոն) էլեկտրակայաններ,
        գ. Օրենքով կամ ՊՄԳ-ով սահմանված գնման երաշխիքային ժամկետը լրացած կայաններ,

դ.ՊԷԱ կայաններ, որոնց համար ՊՄԳ-ով նախատեսված է մրցակցային պայմաններով գործելու իրավունք.

5) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի և մեծածախ առնտրի լիցենզիայի հիման վրա հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրող (այսուհետ՝ ՀԾՄ):

29. Արտադրողն Օրենքի, լիցենզիայի,Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝

1) Էլեկտրական էներգիան վաճառում է ԷՄՇ առնտրի մասնակիցներին,
2) ԷՄՇ-ում էլեկտրական էներգիա է գնում՝ պայմանագրային պարտականությունների կատարումը սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չկարողանալու դեպքում,
3) արտահանում է էլեկտրական էներգիա:

30. Երաշխավորված մատակարարն Օրենքի,լիցենզիայի,Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝

1) գնում է էլեկտրական էներգիա (հզորություն) ՎԷԱ կայաններից, ՊԷԱ կայաններից, ԻԷԱ-ներից և ԷՄՇ առնտրի այլ մասնակիցներից,
2) ներկրում է էլեկտրական էներգիա,
3) էլեկտրական էներգիայի ավելցուկը վաճառում է ԷՄՇ առնտրի մասնակիցներին:

31. Մատակարարն Օրենքի, լիցենզիայի,Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝

1) գնում է էլեկտրական էներգիա ԷՄՇ առնտրի մասնակիցներից, բացառությամբ ՎԷԱ կայանների, ՊԷԱ կայանների և Մանրածախ շուկայի առնտրային կանոնների համաձայն Երաշխավորված մատակարարի հետ պայմանագիր կնքած ԻԷԱ-ների,
2) ներկրում է էլեկտրական էներգիա,
3) էլեկտրական էներգիայի ավելցուկը վաճառում է ԷՄՇ առնտրի մասնակիցներին:

32. ՀԾՄ-ն իր լիցենզիաների, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝

1) Հանձնաժողովի սահմանված չափաքանակով և կարգավորվող գնով վաճառում է էլեկտրական էներգիա Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող (այսուհետ՝ ԿՈՒՊ) բաղադրիչում,
2) Կանոններով նախատեսված դեպքերում գնում և վաճառում է էլեկտրական էներգիա,
3) ԷՄՇ-ում էլեկտրական էներգիա է գնում՝ սեփական արտադրության էլեկտրական էներգիայով պայմանագրային պարտականությունների կատարումը չկարողանալու դեպքում,
4) արտահանում և ներկրում է էլեկտրական էներգիա:

33. Կանոնների 32-րդ կետի 2-ից 4-րդ ենթակետերով սահմանված իրավունքները ՀԾՄ-ն կարող է իրականացնել Կանոնների 32-րդ կետի 1-ին ենթակետով և 44-րդ կետով սահմանված պարտականությունների առաջնահերթ կատարման պայմանով:

34. Մեծածախ առնտուր իրականացնողն (այսուհետ՝ ՄԱԻ) Օրենքի, լիցենզիայի, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝

1) չկարգավորվող գներով գնում է էլեկտրական էներգիա ԷՄՇ առևտրի մասնակիցներից, բացառությամբ ՎԷԱ կայանների, ՊԷԱ կայանների և Մանրածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն Երաշխավորված մատակարարի հետ պայմանագիր կնքած ԻԷԱ-ների,
2) ներկրում է էլեկտրական էներգիա,
3) վաճառում է էլեկտրական էներգիա,
4) արտահանում է էլեկտրական էներգիա:

35. Որակավորված սպառողը սեփական կարիքների բավարարման նպատակով Օրենքի, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝
1) գնում է էլեկտրական էներգիա ԷՄՇ-ում,
2) ներկրում է էլեկտրական էներգիա,
3) էլեկտրական էներգիայի ավելցուկը վաճառում է ԷՄՇ առևտրի մասնակիցներին:

36. Որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու համար սպառողը (բացառությամբ բնակչության) պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝
1) միացած է Հաղորդման ցանցին կամ Բաշխման ցանցին,
2) ունի Հաղորդման ցանցային կանոններին համապատասխան էլեկտրական էներգիայի հաշվառման համակարգ:

37. Հաղորդողը և Բաշխողն Օրենքի, լիցենզիայի և Կանոնների համաձայն համապատասխանաբար Հաղորդման ցանցի, Բաշխման ցանցի կորուստների և սեփական կարիքների փոխհատուցման նպատակով ԷՄՇ-ում գնում են էլեկտրական էներգիա: Բաշխողի փոխարեն ԷՄՇ-ում էլեկտրական էներգիան գնում է Երաշխավորված մատակարարը:

38. ՎԷԱ կայանն իրավունք ունի սեփական կարիքների բավարարման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիան սպառել հաշվառման տարբեր կետերում համաձայն Մանրածախ շուկայի առևտրային կանոնների:

## ԳԼՈՒԽ 7 ԷՄՇ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԸ

39. Կանոնների համաձայն՝ ԷՄՇ մասնակիցներին ծառայություններ են մատուցում Շուկայի օպերատորը, Համակարգի օպերատորը, Հաղորդողը, Բաշխողը, ինչպես նաև ՀԾՄ-ն:

40. Շուկայի օպերատորն Օրենքի, լիցենզիայի, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝
1) իրականացնում է ԷՄՇ մասնակիցների ՇԿԾ մուտքի, դրանից դուրս գալու հետ կապված գործառույթներ,
2) իրականացնում է ԷՄՇ առևտրի մասնակցին հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի տրամադրման և փոփոխման, ինչպես նաև Որակավորված սպառողի կարգավիճակի տրամադրման հետ կապված գործառույթներ,
3) շահագործում ու սպասարկում է ՇԿԾ-ն,
4) ապահովում է ԷՄՇ մասնակցի կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիության պահպանումը,

5) ՇԿԾ-ում ամրագրում է ԷՄՇ մասնակցի՝ էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու և ծառայություններ ստանալու առավելագույն թույլատրելի սահմանաչափը,
6) գործելով որպես բենեֆիցիար՝ երաշխիք տված բանկին ներկայացնում է երաշխիքով դրամական գումար վճարելու մասին գրավոր պահանջ՝ նշելով այն բանկի հաշվի համարը, որին ենթակա է փոխանցման դրամական գումարը,
7) բանկային երաշխիքը վերադարձնում է այն ներկայացրած ԷՄՇ առևտրի մասնակցին՝ նշելով դրա նկատմամբ իրավունքներից հրաժարման մասին,
8) ՇԿԾ-ի միջոցով գրանցում է ԷՄՇ մասնակիցների Հայտերը և հաշվառում է Գործարքները,
9) ՇԿԾ-ի միջոցով կազմակերպում է ՕԱՇ-ի բնականոն աշխատանքը, այդ թվում ՕԱՇ քլիրինգը,
10) ՇԿԾ-ի միջոցով հաշվառում է ԷՄՇ առևտրի մասնակիցների կողմից գնված և վաճառված էլեկտրական էներգիայի քանակը,
11) ՇԿԾ-ի միջոցով իրականացնում է ՀԱՇ-ում առաջացած անհաշվեկշռույթների հաշվարկներ,
12) ՇԿԾ-ի միջոցով բացառությամբ ՉՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքների համար կազմում է վճարման ենթակա էլեկտրական էներգիայի, ինչպես նաև ԷՄՇ-ում մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտեր և ներկայացնում է ԷՄՇ մասնակիցների հաստատմանը,
13) համակարգում է էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի իրականացման գործընթացը,
14) կազմակերպում է ԷՄՇ-ում Առևտրային հաշվառումը,
15) իրականացնում է ԷՄՇ-ի արդյունավետ և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

41. Համակարգի օպերատորն Օրենքի, լիցենզիայի, Կանոնների, Հաղորդման ցանցային կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝
1) կազմում է էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշիռը,
2) ապահովում է էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքը,
3) Գործարքների տեղաբաշխման հիման վրա իրականացնում է համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների գնահատում,
4) առաջարկում է ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներին վերանայել Գործարքների տեղաբաշխումը և ԷՄՇ առևտրի մասնակցին ուղարկում է Գործարքների տեղաբաշխման իր տարբերակը՝ համապատասխան հիմնավորումներով,
5) կառավարում է Համակարգային ծառայությունների մատուցումը,
6) կանխատեսում է Հաղորդման ցանցի կորուստները և այդ մասին ծանուցում է Հաղորդողին և Շուկայի օպերատորին,

7) ՕՐԱ պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով ՀԾՄ-ին տալիս է կարգավարական հրահանգներ,
8) իր կողմից հայտարարված Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակում ԷՄՇ մասնակիցներին տալիս է կարգավարական հրահանգներ
9) համակարգում է էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի իրականացման գործընթացը,
10) ապահովում է ԷՄՇ մասնակցի կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիության պահպանումը
11) իրականացնում է այլ գործառույթներ, որոնք անհրաժեշտ են էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքի համար։

42. Հաղորդողն Օրենքի, լիցենզիայի, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝
1) ԷՄՇ առևտրի մասնակիցներին մատուցում է հաղորդման ծառայություն,
2) ապահովում է Հաղորդման ցանցում գտնվող Հաշվառման համալիրների անխափան աշխատանքը,
3) իրականացնում է էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցումից բխող այլ գործառույթներ։

43. Բաշխողն Օրենքի, լիցենզիայի, Կանոնների և ԷՄՇ պայմանագրի համաձայն՝
1) ԷՄՇ առևտրի մասնակիցներին մատուցում է բաշխման ծառայություն,
2) գրանցում է ԷՄՇ մասնակիցների՝ Բաշխման ցանցին միացված Հաշվառման համալիրների տվյալների, այդ թվում՝ առևտրային և վերստուգիչ հաշվիչների ցուցմունքները,
3) ապահովում է գրանցված տվյալների լիարժեքությունը և հասանելիությունը Շուկայի օպերատորի համար՝ իրական ժամանակում էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի (ԷՀԱՀ), ՇԿԾ-ի կամ այլ կիրառվող ծրագրային փաթեթների միջոցով,
4) իրականացնում է էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցումից բխող այլ գործառույթներ։

44. ՀԾՄ-ն իր լիցենզիաների և Կանոնների համաձայն մատուցում է Հաշվեկշռման ծառայություն՝ Հաշվեկշռման շուկայում իրականացնելով դրա համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի առուվաճառք։

45. ԷՄՇ-ում մատուցված ծառայությունների համար վճարում է այն գնորդը, որն այդ էլեկտրական էներգիան սպառել է։ Էլեկտրական էներգիայի արտահանման կամ տարանցիկ փոխադրման դեպքում ԷՄՇ-ում մատուցված ծառայությունների համար վճարում է այն ԷՄՇ մասնակիցը, որն արտահանում է էլեկտրական էներգիան կամ իրականացնում է տարանցիկ փոխադրումը։ ԷՄՇ-ում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են Հանձնաժողովի սահմանած սակագնին համապատասխան, հետևյալ կարգով.

1) Հաղորդման, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի ծառայությունների համար, եթե միացված են Հաղորդման ցանցին կամ Արտադրողին,
2) Հաղորդման, Բաշխման, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի ծառայությունների համար, եթե միաժամանակ միացված են Հաղորդման և Բաշխման ցանցին,
3) Հաղորդման, Բաշխման, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի ծառայությունների համար, եթե միացված են Բաշխման ցանցին:

## ԳԼՈՒԽ 8 ԷՄՇ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

46. ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների շրջանակում կարող է իրականացնել էլեկտրական էներգիայի առևտուր և համապատասխանաբար օգտվել ԷՄՇ-ում մատուցվող ծառայություններից, եթե.
   1) Կանոնների 47-րդ կետի համաձայն ընտրել է ԷՄՇ-ում հաշվեկշռման պատասխանատվության իրականացման եղանակը,
   2) իր Հաշվառման համալիրը տեղակայված է Սահմանազատման կետում և համապատասխանում է Հաղորդման ցանցային կանոններով սահմանված պահանջներին,
   3) ՀՊԿԻ, ՀՊԿԼ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ստանձնելու դեպքում՝ Կանոնների 65-րդ կետի և 30-րդ գլխի պահանջների համաձայն ներկայացրել է բանկային երաշխիք, իսկ Երաշխավորված մատակարարը՝ Կանոնների 31-րդ գլխի պահանջների համաձայն վճարումների երաշխավորումն ապահովվող միջոցներ:
47. ԷՄՇ-ում հաշվեկշռման պատասխանատվությունը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով.
   1) ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների 49-րդ կետի համաձայն ստանձնել է ինքնուրույն հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակ (այսուհետև՝ ՀՊԿԻ կարգավիճակ),
   2) ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների 50-րդ կետի համաձայն միացել է ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբին՝ վերջինիս լիազորելով միայն իր հաշվեկշռման պատասխանատվությունը (այսուհետև՝ ՀՊԿԼ կարգավիճակ),
   3) ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների 51-րդ կետի համաձայն միացել է ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբին՝ վերջինիս լիազորելով ԷՄՇ-ում իր անունից հանդես գալ էլեկտրական էներգիայի առևտուր իրականացնելիս, իր փոխարեն ստանձնել հաշվեկշռման պատասխանատվություն և վճարել ծառայությունների համար (այսուհետև՝ ՀՊԿՄ կարգավիճակ),
   4) ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների 52-րդ կետի համաձայն ստանձնել է պատասխանատվություն ԷՄՇ այլ առևտրի մասնակցի անհաշվեկշռույթների համար կամ ձևավորել է հաշվեկշռման խումբ (այսուհետև՝ ՀՊԿԽ կարգավիճակ):
48. ԷՄՇ առևտրի մասնակիցը կարող է միևնույն ժամանակ ունենալ ՀՊԿԻ, ՀՊԿԽ, ՀՊԿԼ կամ ՀՊԿՄ կարգավիճակներից միայն մեկը: ԷՄՇ առևտրի մասնակիցը կարող է միաժամանակ

ընդգրկված լինել միայն մեկ ՀԿՊԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի հաշվեկշռման խմբում:

49. ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի ստանձնել ՀՊԿԻ կարգավիճակ և ԷՄՇ-ում ստանձնել իր անհաշվեկշռույթների համար ինքնուրույն պատասխանատվություն: Եթե ՀՊԿԻ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցն ունի մեկից ավելի Հաշվառման կետեր, ապա անհաշվեկշռույթները դիտարկվում են բոլոր Հաշվառման կետերի հանրագումարով: ՀՊԿԻ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցն այդ կարգավիճակից կարող է հրաժարվել ՀՊԿԼ, ՀՊԿԽ կամ ՀՊԿՄ կարգավիճակ ստանձնելու դեպքում: ԿԷԱ կայանները, Հաղորդողը, ինչպես նաև ՀԾՄ-ն՝ ԷՄՇ-ում էլեկտրական էներգիայի առուվաճառքի Գործարքների մասով, ստանում են պարտադիր ՀՊԿԻ կարգավիճակ և այդ կարգավիճակից հրաժարվելու իրավունք չունեն:

50. ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի ստանձնել ՀՊԿԼ կարգավիճակ և ԷՄՇ-ում իր հաշվեկշռման պատասխանատվությունը լիազորել մեկ այլ ԷՄՇ առևտրի մասնակցի, եթե վերջինս ունի ՀՊԿԽ կարգավիճակ: ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների արժեքը, բացառությամբ դրա արդյունքում ձևավորված ծառայությունների արժեքի, ամբողջությամբ հաշվեգրվում է ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի այն մասնակցին, որը տվյալ լիազորությունը ստանձնել է: ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի լիազորել իր հաշվեկշռման պատասխանատվությունը մեկ այլ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի կամ հրաժարվել ՀՊԿԼ կարգավիճակից՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿՄ կարգավիճակ ստանձնելու դեպքում:

51. ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի ստանձնել ՀՊԿՄ կարգավիճակ և ընդգրկվել ՀԿՊԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբում: ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների համար ամբողջական պատասխանատվություն է կրում ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ այն մասնակիցը, որի հաշվեկշռման խմբում վերջինս ընդգրկվել է: ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի իր փոխարեն ԷՄՇ-ում էլեկտրական էներգիայի առևտրի իրականացումը և հաշվեկշռման պատասխանատվությունը լիազորել մեկ այլ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի կամ հրաժարվել ՀՊԿՄ կարգավիճակից՝ ՀՊԿԻ, ՀՊԿԼ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ստանձնելու դեպքում: ՄԱԻ-ները ՀՊԿՄ կարգավիճակ ստանձնելու իրավունք չունեն: ԷՄՇ առևտրի տվյալ մասնակիցները ստանում են պարտադիր ՀՊԿՄ կարգավիճակ և այդ կարգավիճակից հրաժարվելու իրավունք չունեն.

    1) Բաշխողը,
    2) ՊԷԱ կայանները,
    3) ՎԷԱ կայանները:

52. ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի ձևավորել հաշվեկշռման խումբ և ստանձնել ՀՊԿԽ կարգավիճակ իր հաշվեկշռման խմբում ընդգրկելով ՀՊԿԼ կամ ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցների, իսկ Մատակարարները և ՄԱԻ-ները՝ նաև ԻԷԱ-ների: ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցը

պատասխանատվություն է կրում ինչպես իր հաշվեկշռման խմբում ընդգրկված ՀՊԿԼ և ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցների այնպես էլ ԻԷԱ-ների առաջացրած անհաշվեկշռույթների համար: ԷՄՇ առևտրի տվյալ մասնակիցները ստանում են պարտադիր ՀՊԿԽ կարգավիճակ և այդ կարգավիճակից հրաժարվելու իրավունք չունեն.

1) Երաշխավորված մատակարարը,
2) Մատակարարները:

53. ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի և վերջինիս հաշվեկշռման խմբում ընդգրկված ՀՊԿԼ և ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցների հարաբերությունները չեն կարգավորվում, բացառությամբ Երաշխավորված մատակարարի և իր հաշվեկշռման խմբում ընդգրկված մասնակիցների:
54. ՀԿՊԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբի համար գործում են հետևյալ սահմանափակումները.
    1) ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող կամ այն ստանալու ցանկություն հայտնած Որակավորված սպառողը չի կարող ընդգրկվել ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող Որակավորված սպառողի Հաշվեկշռման խմբում,
    2) ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող կամ այն ստանալու ցանկություն հայտնած ՄԷԱ կայանը չի կարող ընդգրկվել ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ՄԷԱ կայանի Հաշվեկշռման խմբում,
    3) ԻԷԱ-ն չի կարող ընդգրկվել ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող Որակավորված սպառողի և ՄԷԱ կայանի Հաշվեկշռման խմբում:
55. Երաշխավորված մատակարարի Հաշվեկշռման խմբում պարտադիր ընդգրկվում են ՀՊԿՄ կարգավիճակ ունեցող և վերջինիս հետ պայմանագիր կնքած ՊԷԱ, ՎԷԱ կայանները, ԻԷԱ-ները (ԻԷԱ-Բաշխող փոխհոսքերի շրջանակում), կարգաբերման-գործարկման փուլում գտնվող բոլոր Արտադրողները, իր հետ մատակարարման պայմանագիր ունեցող սպառողները, ինչպես նաև Բաշխողը: Երաշխավորված մատակարարն իր հաշվեկշռման խմբում ներառված ԷՄՇ մասնակիցների, այդ թվում Բաշխողի առաջացրած անհաշվեկշռույթների համար ստանձնում է միասնական պատասխանատվություն:
56. ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցը, բացառությամբ Երաշխավորված մատակարարի և Մատակարարների, իրավունք ունի դադարեցնել հաշվեկշռման խմբի գործունեությունը՝ ՀՊԿԻ, ՀՊԿՄ կամ ՀՊԿԼ կարգավիճակ ստանձնելու նպատակով, ինչպես նաև կարող է հաշվեկշռման խմբից հանել ՀՊԿՄ կամ ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներին:
57. ԷՄՇ առևտրի մասնակիցների Կանոնների 47-րդ կետով սահմանված՝ հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի փոփոխությունը տեղի է ունենում Կանոնների 71-73-րդ կետերի համաձայն: Այդ կարգավիճակի յուրաքանչյուր փոփոխության ժամանակ գործում է ՇԿԾ-ում գրանցվելու համար տվյալ կարգավիճակի տրամադրման, ինչպես նաև սույն գլխով սահմանված պայմաններն ու սահմանափակումները:

## ԳԼՈՒԽ 9 ԷՄՇ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

58. ԷՄՇ-ին մասնակցելու նպատակով մասնակիցները կնքում են ԷՄՇ պայմանագիր: ԷՄՇ պայմանագիրը կնքվում է մի կողմից ԷՄՇ ծառայություններ մատուցողների, մյուս կողմից ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև:

59. ԷՄՇ պայմանագիրը համարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով միանալու պայմանագիր (օֆերտա), որին ԷՄՇ առևտրին մասնակիցները կարող են միանալ սույն գլխով սահմանված կարգով:

60. ԷՄՇ ծառայություններ մատուցողներն ԷՄՇ-ին միանալու համար ՇԿԾ-ի միջոցով Շուկայի օպերատորի հաշվառմանն են ներկայացնում Հանձնաժողովի կողմից սահմանված օրինակելի ձևին համապատասխան ԷՄՇ պայմանագրին միանալու օֆերտան, իսկ ԷՄՇ առևտրի մասնակիցները՝ ակցեպտը:

61. ՊԷԱ և ՎԷԱ կայանները, ի լրումն ԷՄՇ պայմանագրի, ԷՄՇ-ում էլեկտրական էներգիայի առևտուր իրականացնելու նպատակով Երաշխավորված մատակարարի հետ կնքում են նաև Հանձնաժողովի սահմանած՝

   1) Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (գնման երաշխիք ունեցող 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող – բաշխող) պայմանագիր կամ
   2) Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (Օրենքով գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող (Երաշխավորված մատակարար) պայմանագիր:

# ԲԱԺԻՆ 3

# ԷՄՇ-ՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

## ԳԼՈՒԽ 10 ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

62. ԷՄՇ-ին մասնակցելու նպատակով ԷՄՇ մասնակիցը ՇԿԾ-ում բացում է գրանցման վերաբերյալ հայտ՝ կցելով Կանոնների 64-րդ կետով պահանջվող փաստաթղթերը և լրացնելով՝

   1) անվանումը (անունը), պետական գրանցման համարը (նույնականացման քարտի տվյալները),
   2) հարկ վճարող հաշվառման համարանիշը (հանրային ծառայության համարանիշը),
   3) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն,

4) ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է գտնվելու (հաշվառման) վայրի հասցեից),
5) էլեկտրոնային փոստի հասցեն,
6) հեռախոսահամարը,
7) բանկային տվյալները,
8) ՇԿԾ օգտատերերի քանակը և տվյալները՝ ըստ վերապահված լիազորությունների,
9) Արտադրողի դեպքում լրացվում է նաև արտադրող կայանի՝
   ա. տեղակայման հասցեն,
   բ. Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի,
   գ. էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով օգտագործվող էներգակրի տեսակը,
   դ. լիցենզիայով ամրագրված դրվածքային հզորությունը,
   ե. տեխնոլոգիական նվազագույն հզորությունը,
   զ. հզորության բարձրացման արագությունը,
   է. հզորության նվազեցման արագությունը,
   ը. էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում:
10) նշում Որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու մասին: Այդ դեպքում լրացվում է նաև՝
   ա. սպառման համակարգի տեղակայման հասցեն,
   բ. Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի,
   գ. սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորությունը,
   դ. էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում:

63. ՇԿԾ-ում գրանցվելիս ԷՄՇ մասնակիցը նշում է հաշվեկշռման պատասխանատվության իրականացման՝ ՀՊԿԻ, ՀՊԿԼ, ՀՊԿՄ կամ ՀՊԿԽ իր նախընտրած կարգավիճակը: ՀՊԿԼ և ՀՊԿՄ կարգավիճակի դեպքում ԷՄՇ մասնակիցը նշում է իր անհաշվեկշռույթների համար պատասխանատու ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի տվյալները:
64. ՇԿԾ-ում գրանցման հայտ բացելիս ԷՄՇ մասնակիցը կցում է.
   1) նույնականացման քարտը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը, ՇԿԾ օգտատերերի լիազորությունները հավաստող փաստաթղթերը և նրանց էլեկտրոնային ստորագրության նմուշները,
   2) Հանձնաժողովի կողմից տրամադրված գործունեության լիցենզիան կամ կարգավիճակի վերաբերյալ հիմնավորումը,
   3) ԷՄՇ ծառայություններ մատուցողներն ԷՄՇ պայմանագրին միանալուն ուղղված իրենց կողմից ստորագրված օֆերտան, իսկ ԷՄՇ առևտրի մասնակիցը՝ իր կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ակցեպտը, որը ենթակա է հաշվառման Շուկայի օպերատորի կողմից Կանոնների համաձայն,

4) ՀՊԿԼ և ՀՊԿՄ կարգավիճակ ստանձնելիս՝ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի գրավոր համաձայնությունը,
5) ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ ստանձնելիս՝ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, բացառությամբ Երաշխավորված մատակարարի:

65.ՇԿԾ-ի միջոցով բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը ներկայացնելու հետո, այն ներկայացրած ԷՄՇ առևտրի մասնակիցը դրա բնօրինակը Շուկայի օպերատորին ուղարկում է փոստով կամ պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Սույն կետի պահանջները գործում են բանկային երաշխիքի գործողության ժամկետը լրանալու, ինչպես նաև երաշխիքի թույլատրելի սահմանաչափն ավելացնելու նպատակով նոր երաշխիք ներկայացնելու ժամանակ:

66. Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում գրանցման հայտ ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Կանոնների 67-րդ կետով նախատեսված դեպքի, ստուգում է ՇԿԾ-ում գրանցման ժամանակ ներկայացված տվյալների և օֆերտայում կամ ակցեպտում, ինչպես նաև բանկային երաշխիքում պարունակվող տվյալների համապատասխանությունն Օրենքի, ԷՄՇ մասնակցի լիցենզիայի, ԷՄՇ պայմանագրին միանալու ակցեպտի և Կանոնների պահանջներին:

67.Որակավորված սպառողի կողմից ակցեպտում ներկայացված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ստուգում է Համակարգի օպերատորը և 3 աշխատանքային օրվա ընթացքում ստուգման արդյունքների վերաբերյալ ՇԿԾ-ի միջոցով տեղեկացնում Շուկայի օպերատորին: Համակարգի օպերատորի դրական եզրակացությունը ստանալու դեպքում՝ Շուկայի օպերատորը 2 աշխատանքային օրվա ընթացքում Կանոնների 66-րդ կետի համապատասխան ստուգում է Որակավորված սպառողի կողմից ՇԿԾ-ում գրանցման ժամանակ ներկայացված տվյալների համապատասխանությունը:

68. Կանոնների սույն գլխի պահանջներին համապատասխանության, իսկ Որակավորված սպառողի դեպքում նաև Կանոնների 36-րդ կետով սահմանված պահանջները բավարարելու դեպքում Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում գրանցում է ԷՄՇ մասնակցին և.

1) տրամադրում է ՇԿԾ մուտք գործելու տոկեն,
2) հաշվառում է ԷՄՇ ծառայություններ մատուցողի օֆերտան, իսկ ԷՄՇ առևտրի մասնակցի դեպքում՝ ակցեպտը,
3) համապատասխանաբար գրանցում է ՀՊԿԻ, ՀՊԿԽ, ՀՊԿԼ կամ ՀՊԿՄ կարգավիճակը՝ նշելով այն ստանձնելու սկզբի տարին, ամիս, ամսաթիվը և ժամը:
4) ՇԿԾ-ում ամրագրում է տվյալ ԷՄՇ մասնակցի՝ էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու և ծառայություններ ստանալու առավելագույն թույլատրելի սահմանաչափը՝ ելնելով ներկայացված բանկային երաշխիքի չափից: Առավելագույն թույլատրելի սահմանաչափը որոշվում է բանկային երաշխիքի գումարը հինգ տոկոսի չափով նվազեցնելով:

69. ՇԿԾ-ում ներկայացված գրանցման տվյալներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում Շուկայի օպերատորը տվյալ ԷՄՇ մասնակցին առաջակում է երեք աշխատանքային օրվա ընթացքում վերացնել դրանք կամ 66-րդ կետով նշված ակտերին անհամապատասխանության դեպքում մերժում է գրանցումը՝ գրավոր տրամադրելով մերժման համար հիմք հանդիսացած հանգամանքները։

70. Այն դեպքում, երբ Շուկայի օպերատորը մերժում է ԷՄՇ մասնակցի գրանցումը, ապա գրանցման նոր հայտը ներկայացվում է Կանոնների 62-ից 65-րդ կետերին համապատասխան։

## ԳԼՈՒԽ 11ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

71. ԷՄՇ առևտրի մասնակիցը Կանոնների 47-րդ կետով սահմանված հաշվեկշռման պատասխանատվության իր կարգավիճակը փոխելու նպատակով առնվազն 10 աշխատանքային օր առաջ, իսկ հաշվեկշռման խմբի գործունեությունը դադարեցնելու դեպքում՝ առնվազն 25 աշխատանքային օր առաջ ՇԿԾ միջոցով դիմում է ներկայացնում Շուկայի օպերատորին նշելով հաշվեկշռման պատասխանատվության այն կարգավիճակը, որը ցանկանում է ստանձնել և այն ստանձնելու ժամկետը։ Եթե ԷՄՇ առևտրի մասնակիցը ցանկանում է ստանձնել ՀԿՊՄ կամ ՀՊԿԼ կարգավիճակ, կամ ցանկանում է միանալ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող մեկ այլ ԷՄՇ առևտրի մասնակցի Հաշվեկշռման խմբին, ապա իր դիմումին կցում է նաև ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող այն ԷՄՇ առևտրի մասնակցի գրավոր համաձայնությունը, որի հաշվեկշռման խմբին ցանկանում է միանալ։

72. Շուկայի օպերատորը Կանոնների 71-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է դրա համապատասխանությունը Կանոնների 8-րդ գլխի պահանջներին և անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում ՇԿԾ-ում ամրագրում է ԷՄՇ առևտրի մասնակցի հաշվեկշռման պատասխանատվության նոր կարգավիճակը՝ դիմումում նշված ժամկետից, իսկ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում մերժում է դիմումը՝ նշելով հիմքերը և ՇԿԾ միջոցով այդ մասին տեղեկացնում է դիմողին։ Այն դեպքում երբ.

    1) ԷՄՇ առևտրի մասնակիցը դիմել է ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ այլ առևտրի մասնակցի հաշվեկշռման խմբում ներառվելու կամ գործող հաշվեկշռման խմբում հաշվեկշռման պատասխանատվության իր կարգավիճակը փոխելու համար, ապա.

        ա. Շուկայի օպերատորը Կանոններով սահմանված պահանջներին դիմումի համապատասխանությունը ստուգելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ՇԿԾ-ի միջոցով այն ներկայացնում է ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող այն ԷՄՇ մասնակցի հաստատմանը, որի Հաշվեկշռման խմբում ցանկանում է ներառվել տվյալ ԷՄՇ մասնակիցը կամ որում արդեն իսկ ներառված ԷՄՇ մասնակիցը ցանկանում է փոխել իր հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակը,

բ. ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակիցը Շուկայի օպերատորի ծանուցումը ստանալուց 2 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է ԷՄԸ առևտրի մասնակցի ներառումն իր հաշվեկշռման խմբում, դրանում նրա կարգավիճակի փոփոխությունը կամ մերժում է այն,

գ. Շուկայի օպերատորը ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակցի դրական պատասխանը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում դիմումում նշված ժամկետից հանում է տվյալ ԷՄԸ մասնակցին գործող հաշվեկշռման խմբից և ներառում նրան նոր խմբում կամ փոխում է հաշվեկշռման խմբում նրա կարգավիճակը՝ այդ մասին տեղեկացնելով դիմում ներկայացրած մասնակցին, գործող հաշվեկշռման խմբի ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակցին, ինչպես նաև նոր հաշվեկշռման խմբի ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակցին,

2) ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակիցը ցանկանում է ստանձնել հաշվեկշռման պատասխանատվության այլ կարգավիճակ՝ Շուկայի օպերատորը Կանոններով սահմանված պահանջներին դիմումի համապատասխանությունը ստուգելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ՇԿԾ-ի միջոցով այդ մասին տեղեկացնում է այդ հաշվեկշռման խմբում ներառված ԷՄԸ առևտրի մասնակիցներին և դիմումում նշված ժամկետից դադարեցնում է խմբի գործունեությունը՝ այն ներկայացրած մասնակցին տրամադրելով դիմումում նշված կարգավիճակը:

73. Հաշվեկշռման խմբի գործունեության դադարեցման դեպքում, եթե այդ խմբում ներառված ԷՄԸ առևտրի մասնակիցը խմբի գործունեության դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո Կանոնների սույն գլխի համաձայն չի ստանձնում հաշվեկշռման պատասխանատվության այլ կարգավիճակ, ապա նրա գործունեությունն ԷՄԸ-ում դադարում է Կանոնների 74-րդ կետի 2-րդ ենթակետի բ պարբերության համաձայն:

## ԳԼՈՒԽ 12 ԷՄԸ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

74. ԷՄԸ մասնակցի ԷՄԸ-ից դուրս գալն իրականացվում է՝

1) ԷՄԸ մասնակցի նախաձեռնությամբ, բացառությամբ ԷՄԸ ծառայություններ մատուցողների, ԿԷԱ կայանների, ՀԾՄ-ի և Երաշխավորված մատակարարի՝ Շուկայի օպերատորին դուրս գալու ակնկալվող ժամկետից առնվազն 10, իսկ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԸ առևտրի մասնակցի դեպքում՝ 25 աշխատանքային օր առաջ գրավոր դիմում ներկայացնելու միջոցով՝ նշելով ԷՄԸ-ից դուրս գալու տարին, ամիս, ամսաթիվը և ժամը,

2) Շուկայի օպերատորի նախաձեռնությամբ, եթե.

ա. դադարեցվել (դադարել) է ԷՄԸ մասնակցի լիցենզիայի գործողությունը կամ կորցրել է կարգավիճակը,

բ. Կանոնների 73-րդ կետի համաձայն չի ընտրել հաշվեկշռման պատասխանատվության այլ կարգավիճակ:

75. ԷՄՇ-ից դուրս գալու մասին ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից դիմում կարող է ներկայացվել, եթե վերջինս՝
    1) ամբողջությամբ կատարել է ԷՄՇ-ում ստանձնած պարտավորությունները,
    2) իրականացրել է Կանոններով նախատեսված բոլոր վճարումները:
76. Կանոնների 74-րդ կետի 2-րդ ենթակետի ա պարբերությամբ սահմանված կարգով ԷՄՇ-ից դուրս գալու դեպքում՝ ԷՄՇ-ում տվյալ մասնակցի գործունեությունը դադարեցվում է վերջինիս գործունեության լիցենզիան դադարելու կամ դադարեցնելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրը, եթե տվյալ որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:
77. Կանոնների 74-րդ կետի 2-րդ ենթակետի բ պարբերությամբ սահմանված կարգով ԷՄՇ-ից դուրս գալու դեպքում՝ ԷՄՇ-ում տվյալ մասնակցի գործունեությունը դադարեցվում է Կանոնների 72-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հաշվեկշռման խմբի գործունեության դադարեցման օրը:
78. Շուկայի օպերատորն ԷՄՇ-ից դուրս գալու մասին ԷՄՇ առևտրի մասնակցի դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կանոնների 75-րդ կետում սահմանված պահանջներին համապատասխանության դեպքում այդ մասնակցին տեղեկացնում է դիմումը հաստատելու մասին, իսկ չհամապատասխանելու դեպքում մերժելու մասին՝ նշելով մերժման հիմքերը:
79. Շուկայի օպերատորի կողմից ԷՄՇ առևտրի մասնակցի ԷՄՇ-ից դուրս գալու դիմումը հաստատելու դեպքում՝
    1) տվյալ ԷՄՇ առևտրի մասնակցի հետ ԷՄՇ պայմանագիրը համարվում է լուծված,
    2) Շուկայի օպերատորը հաշվի առնելով ԷՄՇ առևտրի մասնակցի արտադրող կայանը և (կամ) սպառման համակարգը Հաղորդման կամ Բաշխման ցանցին միացված լինելու հանգամանքը՝ վերջիններիս 5 աշխատանքային օր առաջ ՇԿԾ-ի միջոցով ծանուցում է տվյալ առևտրի մասնակցին համապատասխանաբար Հաղորդման կամ Բաշխման ցանցից անջատելու ժամկետի մասին՝ նշելով անջատման տարի, ամիս, ամսաթիվ, օրը և ժամը: Այն դեպքում, երբ տվյալ ԷՄՇ մասնակիցը ձեռք է բերել սպառողի կարգավիճակ մանրածախ շուկայում, ապա գործում են Մանրածախ շուկայի առևտրային կանոնները:
    3) բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ Շուկայի օպերատորը որպես բենեֆիցիար նշելով դրա նկատմամբ իրավունքներից հրաժարման մասին՝ այն վերադարձնում է տվյալ ԷՄՇ առևտրի մասնակցին,
    4) եթե դիմում ներկայացրել է ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցը, ապա Շուկայի օպերատորը դադարեցնում է նրա հաշվեկշռման խմբի գործունեությունը և դադարեցման օրվանից առնվազն 20 աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնում է խմբում ներառված ԷՄՇ առևտրի մասնակիցներին՝ նշելով խմբի գործունեության դադարեցման տարին, ամիս, ամսաթիվը և ժամը: Այդ

մասնակիցների հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի փոփոխությունը տեղի է ունենում Կանոնների 73-րդ կետի համաձայն,

5) եթե դիմում ներկայացրել է ՀՊԿՄ կամ ՀՊԿԼ կարգավիճակ ունեցող ԷՄԾ առևտրի մասնակիցը, ապա Շուկայի օպերատորն ԷՄԾ-ից դուրս գալու օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնում է այն հաշվեկշռման խմբի ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄԾ առևտրի մասնակցին, որի կազմում ներառված է տվյալ առևտրի մասնակիցը՝ նշելով դուրս գալու տարին, ամիս, ամսաթիվը և ժամը:

## ԲԱԺԻՆ 4

## ՇԿԾ ՀԱՐԹԱԿՆԵՐԸ ԵՎ ԷՄԾ ՄԱՍՆԱԿՑԻ ՊՐՈՖԻԼԸ

### ԳԼՈՒԽ 13 ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐԸ

80. ՇԿԾ-ն ապահովում է ԷՄԾ-ի կազմակերպումը, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցությունը, ԷՄԾ տարբեր հատվածներում առևտրի իրականացումը, Գործարքների կնքումը և հաշվարկների կատարումը:
81. Յուրաքանչյուր ԷՄԾ մասնակից ՇԿԾ է մուտք գործում Շուկայի օպերատորի կողմից տրամադրված տոկենի միջոցով:
82. Տոկեններն ԷՄԾ մասնակիցներին տրամադրվում են առձեռն՝ հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ յուրաքանչյուր մասնակցին 4 անվճար տոկեն, բացառությամբ ՎԷԱ կայանների, որոնց տրամադրվում է 2 անվճար տոկեն: Լրացուցիչ տոկեններ ԷՄԾ մասնակիցներին տրամադրվում են Շուկայի օպերատորի կողմից՝ վճարովի հիմունքներով՝ տարեկան 5000 դրամ (ներառյալ ԱԱՀ) վճարի դիմաց:
83. Վճարման փաստը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում Շուկայի օպերատորը լրացուցիչ տոկեն ձեռք բերելու համար ԷՄԾ մասնակցի դիմումը ստանալուց երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է համապատասխան քանակի տոկեն, իսկ բացակայության դեպքում՝ մերժում:
84. ՇԿԾ-ն պետք է օժտված լինի այնպիսի համակարգերով, որոնք կապահովեն՝
    1) ՇԿԾ-ի անխափան և հուսալի աշխատանքը,
    2) ծածկագիր գեներացնող սարքի և ծածկագիր գեներացնող ծրագրային ապահովման միջոցով օգտատիրոջ երկֆակտորային աուտենտիկացումը և գործողությունների վավերացումը,
    3) ԷՄԾ մասնակիցների հաղորդակցությունը,
    4) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված փաստաթղթերի կիրառումը,
    5) հաշվառման ակտերի դուրսգրումը, ծանուցված և վճարված էլեկտրոնային հաշիվների գրանցումը,
    6) ԷՄԾ տարբեր հատվածներում ներկայացված Հայտերում տվյալների համապատասխանության գնահատումը և հնարավոր թերությունների մասին զգուշացումները,

7) ԷՄՇ տարբեր հատվածներում իրականացման ընթացքում գտնվող Գործարքների և գնման բոլոր Հայտերի՝ երաշխիքով ապահովված լինելու համապատասխանության գնահատումը և առկա երաշխիքային գումարի անբավարար լինելու դեպքում՝ մասնակցի Հայտ ներկայացնելու հնարավորության ավտոմատ սահմանափակումը,
8) ՇԿԾ-ում ամրագրված տեղեկատվության ամբողջականության և ոչնչացումներից պաշտպանումը,
9) երրորդ անձանց չթույլատրված մուտքի արգելումը,
10) բանկային երաշխիքով սահմանված գումարի մեծության ամրագրման միջոցով, Հայտերի ներկայացման և Գործարքների կնքման թույլատրելի սահմանաչափերի ավտոմատ կիրառումը,
11) առանձին էլեկտրոնային համակարգի վրա հիմնված, անվտանգության բարձր մակարդակ ունեցող և ՇԿԾ-ի գլխավոր ծրագրի հետ համապատասխանեցված պահուստավորման ծրագրի առկայությունը, որը ենթակա է գործարկման գլխավոր ծրագրի անսարքության կամ աշխատանքի ժամանակավոր խափանման դեպքում:

85.ՇԿԾ-ն նվազագույնը պետք է ներառի հետևյալ հարթակները.

1) Օգտատերերի տվյալների բազայի և կառավարման հարթակ,
2) Համակարգային կանխատեսումների հարթակ.
   ա. տարեկան հաշվեկշռի կանխատեսման մոդուլ,
   բ. պատրաստականության և կարգավարական տեղեկատվության կառավարման մոդուլ.
3) Ուղիղ պայմանագրերի շուկայի կառավարման հարթակ,
4) Օր-առաջ շուկայի կառավարման հարթակ,
5) Հաշվեկշռման շուկայի կառավարման և անհաշվեկշռույթների հաշվարկման հարթակ,
6) Գործարքների կառավարման հարթակ.
   ա. Գործարքների տեղաբաշխման մոդուլ,
   բ. կնքված Գործարքների մոդուլ.
7) Ֆինանսական գործառնությունների հարթակ.
   ա. Ֆինանսական երաշխիքների կառավարման մոդուլ,
   բ. Հաշվառման ակտերի դուրսգրման մոդուլ՝ ըստ ԷՄՇ հատվածների, բաղադրիչների, Առևտրային ժամանակահատվածների, Գործարքների, Գործարքի կողմերի, վճարումների և պարտավորությունների, ինչպես նաև ըստ Հաշվառման կետերի.
8) Տեղեկատվության և հաղորդակցության հարթակ.
   ա. Ծանուցումների և հարցումների մոդուլներ,
   բ. Տեղեկատվական և վերլուծական մոդուլ,
   գ. ՇԿԾ օգտատերերի ծրագրային աջակցման մոդուլ.

86. ԷՄՇ առևտրի մասնակիցն իրավունք ունի մուտք գործելու միայն իրեն վերաբերող ՇԿԾ-ի հարթակներ և մոդուլներ:

87. Շուկայի օպերատորը պատասխանատու է ՇԿԾ շահագործման, անվտանգության, սպասարկման և կառավարման համար:

88. Շուկայի օպերատորն ու Համակարգի օպերատորն իրենց իրավասությունների սահմաններում պատասխանատու են ՇԿԾ-ում արտացոլված տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

## ԳԼՈՒԽ 14 ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՔԱՐՏԸ

89. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտը ներառվում է ՇԿԾ օգտատերերի բազայի հարթակում:

90. ՇԿԾ-ում գրանցված ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտը համապատասխանաբար պարունակում է սույն գլխում սահմանված տեղեկատվությունը: ԷՄՇ մասնակիցը պարտավոր է Շուկայի օպերատորին ծանուցել իր էլեկտրոնային վիրտուալ քարտում առկա տեղեկատվության անճշտությունների կամ տեղի ունեցած փոփոխությունների մասին:

91. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտի ընդհանուր պրոֆիլը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.
   1) անվանումը (անունը), պետական գրանցման համարը (նույնականացման քարտի տվյալները),
   2) հարկ վճարող հաշվառման համարանիշը (հանրային ծառայության համարանիշը),
   3) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն,
   4) ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է գտնվելու (հաշվառման) վայրի հասցեից),
   5) էլեկտրոնային փոստի հասցեն,
   6) հեռախոսահամարը,
   7) բանկային տվյալները,
   8) լիցենզիաները, եթե այդպիսիք պահանջվում են Օրենքով,
   9) ԷՄՇ-ում հաշվեկշռման պատասխանատվության իրականացման եղանակը համաձայն Կանոնների 47-րդ կետի,
   10) ՇԿԾ օգտատերերի քանակը և տվյալները՝ ըստ վերապահված լիազորությունների,
   11) ԷՄՇ ծառայություն մատուցողի դեպքում ԷՄՇ պայմանագրի ստորագրված օֆերտան, իսկ ԷՄՇ առևտրի մասնակցի դեպքում՝ ակցեպտի էլեկտրոնային օրինակը և ԷՄՇ-ում վերջինիս վերապահված գործառույթները,
   12) ԷՄՇ հատվածները և բաղադրիչները, որոնցում ԷՄՇ տվյալ մասնակիցն իրավասու է գործունեություն իրականացնել:

92. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտն Արտադրողի դեպքում պարունակում է նաև հետևյալ տեղեկատվությունը.
   1) տեղակայման հասցեն,
   2) Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի,

3) էլեկտրական էներգիայի արտադրության նպատակով օգտագործվող վառելիքի տեսակը,
4) լիցենզիայով ամրագրված դրվածքային հզորությունը,
5) տեխնոլոգիական նվազագույն հզորությունը,
6) հզորության բարձրացման արագությունը,
7) հզորության նվազեցման արագությունը,
8) էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում:

93. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտը Որակավորված սպառողի դեպքում պարունակում է նաև հետևյալ տեղեկատվությունը.
1) սպառման համակարգի տեղակայման հասցեն,
2) Հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր Հաշվառման կետի,
3) սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորությունը,
4) էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի Հաշվառման կետերի դեպքում՝ հզորությունը յուրաքանչյուր Հաշվառման կետում:

## ԳԼՈՒԽ 15 ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇԻՎԸ

94. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային հաշիվը բաղկացած է հետևյալ ենթահաշիվներից.
1) Վաճառող ենթահաշիվ.
2) Գնորդ ենթահաշիվ.
3) Ներկրող ենթահաշիվ.
4) Արտահանող ենթահաշիվ.
5) Հաշվեկշռման ենթահաշիվ:

95. Երաշխավորված մատակարարն ի թիվս Կանոնների 94-րդ կետում նշված ենթահաշիվների ունի նաև «Երաշխավորված մատակարար ենթահաշիվը»:

96. ԷՄՇ մասնակցի էլեկտրոնային հաշվի ենթահաշիվներից յուրաքանչյուրը ներառում է տվյալներ վերջինիս կողմից իրականացված գործարքների վերաբերյալ յուրաքանչյուր Հաշվարկային ժամանակահատվածի համար՝ ըստ ԷՄՇ հատվածների և բաղադրիչների, այդ թվում.
1) էլեկտրական էներգիայի քանակը, որի գնման կամ վաճառքի նպատակով ԷՄՇ մասնակիցը Գործարքներ է կնքել՝ ըստ ԷՄՇ հատվածների և բաղադրիչների,
2) կնքված գործարքների վավերացման վերաբերյալ Կանոններով նախատեսված դեպքերում՝ Շուկայի օպերատորի և Համակարգի օպերատորի հաստատումները,
3) էլեկտրական էներգիայի քանակը՝ ըստ Հաշվառման համալիրների տվյալների, որն ԷՄՇ մասնակիցը փաստացի գնել կամ վաճառել է,
4) էլեկտրական էներգիայի քանակի ժամային տարբերությունները, որոնք առաջացել են ԷՄՇ մասնակցի կնքած և փաստացի իրականացրած Գործարքների արդյունքում,

5) ԷՄՇ մասնակցի կնքած և փաստացի իրականացրած Գործարքների արդյունքում էլեկտրական էներգիայի քանակի ժամային տարբերությունների գները և դրանց աճողական հանրագումարը,
6) ՀՊԿԻ, ՀՊԿԼ, ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի՝ էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու, ինչպես նաև ծառայություններ ստանալու համար երաշխիքային թույլատրելի սահմանաչափերը և մնացորդները։

## ԲԱԺԻՆ 5

## ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

### ԳԼՈՒԽ 16 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

97. Էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշռի պլանավորումն ուղղված է.
   1) գնահատելու էլեկտրաէներգետիկական համակարգի ներքին շուկայի պահանջարկը բավարարելու հնարավորությունը՝ դիտարկելով համակարգի ժամային հաշվեկշիռը բոլոր կայունացված ռեժիմների համար՝ համակարգի բնականոն աշխատանքի պայմաններում,
   2) նվազագույն ծախսերով բավարարել ներքին շուկայի պահանջարկը՝ ապահովելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշները, ինչպես նաև ՀԱԻՐ և ՀԱՎՐԱ միջհամակարգային փոխհոսքերի ժամային գրաֆիկները,
   3) կազմել ԿԷԱ կայանների արտադրության գրաֆիկները՝ Կանոնների 109-րդ կետի համաձայն Հանձնաժողովի կողմից հաստատման նպատակով,
   4) գնահատել հաշվեկշռման համար անհրաժեշտ հզորությունների առկայությունը,
   5) գնահատել միջհամակարգային (ներառյալ՝ տարանցիկ) հոսքերի իրագործելիությունը։
98. ԷՀՏՀ-ն կազմում է Համակարգի օպերատորը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի պահանջարկի և առաջարկի վերաբերյալ իր կողմից մշակված կանխատեսումները և գնահատականները, միջհամակարգային էլեկտրահաղորդման գծերի թողունակությունը վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև ԷՄՇ մասնակիցներից և այլ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգերի լիազորված մարմիններից ստացված տվյալները։
99. Յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը Կանոնների 100-րդ կետում նշված ԷՄՇ մասնակիցները Համակարգի օպերատորին են ներկայացնում Հաղորդման և/կամ Բաշխման ցանցեր իրենց կողմից էլեկտրական էներգիայի կանխատեսվող առաքման և

սպառման գրաֆիկները՝ հաջորդ օրացուցային տարվա բոլոր 12 ամիսների համար՝ ժամային կտրվածքով:

100. ԷՄՇ մասնակիցները Համակարգի օպերատորին են ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը.

1) Շուկայի օպերատորը ներկայացնում է կանխատեսվող արտահանման և ներկրման գրաֆիկները՝ ներառյալ տարանցումը,
2) Արտադրողները (բացառությամբ ՎԷԱ և ՊԷԱ կայանների) ներկայացնում են.
   ա. Արտադրության գրաֆիկները, սեփական կարիքների և կորուստների համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի պահանջարկը յուրաքանչյուր կայանի համար առանձին, եթե այն բաղկացած է մի քանի կայաններից: Ընդ որում տարեկան կամ սեզոնային կարգավորման ջրամբարներ ունեցող ՀԷԿ-երի արտադրության գրաֆիկները կազմվում են այդ ՀԷԿ-երի տարեկան միջին պատմական արտադրության հիման վրա: Բազմամյա կարգավորման ջրամբարներ ունեցող ՀԷԿ-երի արտադրության գրաֆիկները կազմվում են էլեկտրական էներգիայի երաշխավորված արտադրության հիման վրա՝ հաշվի առնելով տարվա սկզբում կանխատեսվող հիդրոլոգիական իրավիճակը և տվյալ ՀԷԿ-ի ջրամբարում պարունակվող ջրի պաշարները: Ռռոգման ռեժիմների կանխատեսումն ԷՀՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածում համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ: Գետերի բնական հոսքի կանխատեսումներն ԷՀՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածի համար պատրաստվում են հաշվի առնելով հիդրոլոգիական իրավիճակի փոփոխման բազմամյա միտումները և օդերևութաբանական ծառայության կանխատեսումները.
   բ. ԷՀՏՀ դիտարկվող ժամանակահատվածում Հաղորդման ցանցային կանոնների համաձայն ներկայացված տեխնիկական բնութագրերի փոփոխության դեպքում՝ դրա վերաբերյալ համապատասխան հիմնավորում:
3) Երաշխավորված մատակարարը ներկայացնում է.
   ա. ԷՄՇ բոլոր միացման կետերի բեռի գրաֆիկները՝ իր սպառողների համար,
   բ. ՎԷԱ և ՊԷԱ կայանների արտադրության գրաֆիկները, ինչպես նաև ԻԷԱ-ների (ԻԷԱ-Բաշխող փոխհոսքերի շրջանակում) կողմից Բաշխման ցանց առաքվող էլեկտրական էներգիայի քանակության կանխատեսումը:
4) Բաշխողը ներկայացնում է Բաշխման ցանցի կորուստների և սեփական կարիքների կանխատեսումը, որը պատրաստվում է Բաշխման ցանցային կանոնների պահանջներին համապատասխան,
5) Մատակարարը ներկայացնում է ԷՄՇ բոլոր միացման կետերում իր բեռի գրաֆիկները,
6) Որակավորված սպառողը ներկայացնում է ԷՄՇ բոլոր միացման կետերում իր բեռի գրաֆիկները,

7) ՄԱԻ-ն ներկայացնում է կանխատեսվող արտադրության գրաֆիկները՝ իր հետ պայմանագիր ունեցող ԻԷԱ-ների մասով, եթե այդպիսիք առկա են:

101. Կանոնների 100-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը Համակարգի օպերատորին ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր տարի մինչև սեպտեմբերի 1-ը Երաշխավորված մատակարարին են ներկայացնում.

1) ՊԷԱ կայանները՝ Կանոնների 100-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը,
2) նախորդ օրացուցային տարում 1 մլն կՎտժ և ավելի սպառում ունեցող սպառողները, բացառությամբ Որակավորված սպառողների՝ իրենց բեռի գրաֆիկները:

102. Համակարգի օպերատորն ԷՀՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածում պետք է հաշվի առնի նոր կայանների կանխատեսվող էլեկտրական էներգիայի արտադրությունը և շահագործումից դուրս եկող կայանների հզորությունները:

## ԳԼՈՒԽ 17 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

103. Համակարգի օպերատորը ՇԿԾ-ի միջոցով յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 20-ը յուրաքանչյուր ԷՄՇ մասնակցի ներկայացնում է ԷՀՏՀ նախագիծը: ԷՄՇ մասնակիցները պարտավոր են 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել կամ Համակարգի օպերատորին ներկայացնել իրենց առարկությունները ներկայացված ԷՀՏՀ նախագծի վերաբերյալ: Համակարգի օպերատորն իրավունք ունի հաշվի առնել կամ մերժել ԷՀՏՀ նախագծի վերաբերյալ ներկայացված ցանկացած առաջարկ՝ ելնելով համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների ապահովման նկատառումից: Մերժման դեպքում Համակարգի օպերատորն ՇԿԾ-ի միջոցով տեղեկացնում է այդ մասին ԷՄՇ մասնակցին՝ ներկայացնելով նաև իր պատճառաբանված հիմնավորումները: Բոլոր առաջարկությունները, մերժումները և դրանց հիմնավորումները Համակարգի օպերատորը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմին և Հանձնաժողով:

104. Համակարգի օպերատորը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ համաձայնեցնել և Հանձնաժողով ու ԷՄՇ մասնակիցներին ներկայացնել ԷՀՏՀ-ն:

105. Հանձնաժողովն ԷՀՏՀ-ն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում կարող է Համակարգի օպերատորից պահանջել տրամադրել պարզաբանումներ, ներառյալ՝ վերանայել ԷՀՏՀ-ն, եթե այն չի համապատասխանում Օրենքի, Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջներին կամ պարունակում է չհիմնավորված գնահատականներ:

106. Կանոնների 105-րդ կետով սահմանված դեպքերում Համակարգի օպերատորն անհրաժեշտ պարզաբանումները տրամադրում է ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

107. ԷՄՇ մասնակիցները մինչև նոյեմբերի 15-ը կարող են Հանձնաժողով ներկայացնել ԷՀՏՀ հստակեցման վերաբերյալ իրենց առաջարկությունները:

108. Հիմք ընդունելով Կանոնների 97-րդ և 105-րդ կետերի պահանջները՝ Հանձնաժողովն ԷՀՏՀ-ի վերջնական տարբերակի վերաբերյալ իր դիրքորոշումը Համակարգի օպերատորին է հայտնում մինչև դեկտեմբերի 15-ը: Համակարգի օպերատորը Հանձնաժողովի դիրքորոշումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում հաստատում և ԷՀՏՀ-ն հրապարակում է ՇԿԾ-ում:

109. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 15-ը հաստատում է.

1) ԿԷԱ կայանների կողմից ԿՈՒՊ բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի չափաքանակները,
2) ՊԷԱ կայանների Տնօրինելի և Պայմանագրային հզորությունները, եթե նախատեսված է ՊՄԳ-ով:

# ԲԱԺԻՆ 6

# ԱՌԵՎՏՈՒՐՆ ԷՄՇ-ՈՒՄ

## ԳԼՈՒԽ 18 ԷՄՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

110. ԷՄՇ-ն բաղկացած է հետևյալ հատվածներից՝

1) Ուղիղ պայմանագրերի շուկա,
2) Օր առաջ շուկա,
3) Հաշվեկշռման շուկա:

111. Ուղիղ պայմանագրերի շուկան բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

1) երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչ,
2) կարգավորվող բաղադրիչ,
3) չկարգավորվող բաղադրիչ:

112. Կարգաբերման-գործարկման փուլում գտնվող բոլոր Արտադրողներն այդ ընթացքում Հաղորդման կամ Բաշխման ցանց առաքված էլեկտրական էներգիան վաճառում են բացառապես Երաշխավորված մատակարարին՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պայմաններով:

113. Ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող բաղադրիչում (այսուհետ՝ ՉՈՒՊ բաղադրիչ) առևտրին մասնակցելու դեպքում ՌԷԱ-ների համար Մանրածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն Երաշխավորված մատակարարի հետ փոխհոսքեր իրականացնելու մասին կարգավորումներով սահմանված իրավունքները դադարում են:

## ԳԼՈՒԽ 19 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ

114. Ուղիղ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում այսուհետ՝ ԵՐՊ բաղադրիչ) առևտուրն իրականացվում է մի կողմից ՊԷԱ և ՎԷԱ

կայանների, և մյուս կողմից Երաշխավորված մատակարարի միջև, ինչպես նաև ՊԷԱ կայանների և ՀԾՄ-ի միջև՝ ՊՄԳ-ով նախատեսված դեպքերում:

115. ՊԷԱ կայանների և ՀԾՄ-ի միջև հարաբերությունները կարգավորվում են ԵՐՊ բաղադրիչում կնքված պայմանագրի հիման վրա: ՀԾՄ-ն պարտավորվում է ԵՐՊ բաղադրիչում ՊԷԱ կայանների հետ կնքված պայմանագրում ամրագրված պայմաններով նշված էլեկտրական էներգիան վաճառել Երաշխավորված մատակարարին:

116. ՊԷԱ և ՎԷԱ կայաններն ԷՄՇ այլ հատվածներում կամ բաղադրիչներում էլեկտրական էներգիա վաճառելու իրավունք չունեն: Վերջիններիս կողմից Երաշխավորված մատակարարին վաճառվող էլեկտրական էներգիայի գները կարգավորվում են Հանձնաժողովի կողմից:

117. Համակարգի օպերատորն Երաշխավորված մատակարարի՝ իր սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիայի գնման ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակով, իրավունք ունի ԵՐՊ բաղադրիչում Երաշխավորված մատակարարի հետ պայմանագրեր կնքած ՊԷԱ կայաններին տալ կարգավարական հրահանգներ: Նման դեպքում Համակարգի օպերատորը պետք է հաշվի առնի Երաշխավորված մատակարարի կողմից ՊԷԱ և ՎԷԱ կայանների էլեկտրական էներգիա գնելու առաջնահերթ պարտավորությունը:

118. ՊԷԱ կայանների հզորությունների առևտուրն իրականացվում է ԵՐՊ բաղադրիչում և ներառում է Համակարգի օպերատորի կողմից Հաղորդման ցանցային կանոնների համաձայն պատվիրված հզորությունները:

## ԳԼՈՒԽ 20 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐՆ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ

119. ԿՈՒՊ բաղադրիչում առևտուրն իրականացվում է մի կողմից ԿԷԱ կայանների և ՀԾՄ-ի, մյուս կողմից Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, Որակավորված սպառողների, ինչպես նաև Հաղորդողի միջև: ՄԱԻ-ները և ՄԷԱ կայանները ԿՈՒՊ բաղադրիչում առևտրին չեն մասնակցում:

120. ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի առևտուրն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և Կանոնների 109-րդ կետի համաձայն Հանձնաժողովի կողմից հաստատված ԿՈՒՊ բաղադրիչում պարտադիր վաճառքի համար սահմանված ամսական էլեկտրական էներգիայի չափաքանակների հիման վրա:

121. Յուրաքանչյուր ամիս՝ ամսի 15-ից մինչև ամսի 20-ն ընկած ժամանակահատվածում, Երաշխավորված մատակարարը, Մատակարարները, Որակավորված սպառողները, ինչպես նաև Հաղորդողը ՇԿԾ-ի միջոցով Շուկայի օպերատորին են ներկայացնում հաջորդ ամսվա ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման իրենց Հայտերը, որոնք պետք է պարունակեն պահանջվող էլեկտրական էներգիայի քանակի մասին տեղեկատվություն՝ բեռի ժամային գրաֆիկի տեսքով: Այն դեպքերում, երբ Երաշխավորված մատակարարը, Մատակարարները, Որակավորված սպառողները, ինչպես նաև Հաղորդողն էլեկտրական էներգիայի գնման Հայտերը ներկայացրել են սույն

կետով սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա վերջիններս չեն մասնակցում ԿՈՒՊ բաղադրիչի տվյալ ամսվա էլեկտրական էներգիայի առևտրին:

122. Էլեկտրական էներգիայի գնման Հայտում նշված էլեկտրական էներգիայի քանակը չի կարող գերազանցել վերջիններիս նախորդ երեք տարիների՝ նույն ամսում բոլոր Հաշվառման կետերում գումարային սպառված էլեկտրական էներգիայի միջին քանակը: Այն դեպքերում, երբ վերջին երեք տարիների համար էլեկտրական էներգիայի սպառման ամսական քանակի մասին տվյալները բացակայում են, ապա՝

1) հաշվի են առնվում վերջին երկու, իսկ դրա բացակայության դեպքում՝ վերջին մեկ տարվա նույն ամսվա տվյալները,
2) Հաղորդման կամ Բաշխման ցանցին նոր միացած սպառողների դեպքում՝ միացման դիմումին կից ներկայացված փաստաթղթերում ու միացման պայմանագրում նշված՝ կանխատեսվող էլեկտրական էներգիայի սպառման ծավալների մասին ամսական տվյալները:

123. ԿՈՒՊ բաղադրիչում մասնակցող ԷՄՇ առևտրի մասնակիցը նախքան Կանոնների 121-րդ կետով սահմանված ժամկետը լրանալն իրավունք ունի փոփոխել կամ չեղարկել ներկայացրած էլեկտրական էներգիայի գնման հայտը:

124. Շուկայի օպերատորը Հանձնաժողովի սահմանած տվյալ ամսվա համար ԿՈՒՊ բաղադրիչում ԿԷԱ կայանների և ՀԾՄ-ի կողմից պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիան Կանոնների 121–րդ կետով սահմանված ժամկետից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ՇԿԾ-ի միջոցով բաշխում է Հայտ ներկայացրած Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, Որակավորված սպառողների, ինչպես Հաղորդողի միջև հետևյալ կերպ.

1) եթե գնման Հայտերում նշված էլեկտրական էներգիայի գումարային քանակը գերազանցում է ԿԷԱ կայանների կողմից հաջորդ ամսվա ընթացքում վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակը, ապա այդ էլեկտրական էներգիան գնման Հայտ ներկայացրած մասնակիցների միջև բաշխվում է վերջիններիս գնման հայտերում նշված էլեկտրական էներգիայի քանակների համամասնությամբ,
2) եթե գնման Հայտերում նշված էլեկտրական էներգիայի գումարային քանակն ավելի փոքր է ԿԷԱ կայանների կողմից հաջորդ ամսվա ընթացքում վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակից, ապա գնման Հայտ ներկայացրած մասնակիցներից յուրաքանչյուրի Հայտը բավարարվում է ըստ դրանում նշված էլեկտրական էներգիայի քանակի,
3) առաջին հերթին բաշխվում է Հանձնաժողովի կողմից սահմանած ցածր սակագնով գործող կայանների կողմից վաճառվող էլեկտրական էներգիան, այնուհետև՝ ավելի բարձր սակագին ունեցող կայանների կողմից վաճառվող էլեկտրական էներգիան,
4) վաճառված էլեկտրական էներգիան գնորդների միջև բաշխելիս կիրառվում է մաթեմատիկական կլորացում, իսկ եթե դրա արդյունքում վաճառված կամ գնված էլեկտրական էներգիան գերազանցել է հայտերում նշված քանակը, ապա իրականացվում է մաթեմատիկական կլորացում պակասորդով:

125. Շուկայի օպերատորը Կանոնների 124-րդ կետի համաձայն ԿՈՒՊ բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակն ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև բաշխելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, հաշվառված Գործարքներին համապատասխան՝ ԷՄՇ մասնակիցների էլեկտրոնային վիրտուալ քարտերի համապատասխան ենթահաշիվներում հաշվեգրում է մասնակիցների՝ միմյանց առաքման ենթակա էլեկտրական էներգիայի քանակների և վճարման ենթակա գումարների մասին տվյալները:

126. ԿՈՒՊ բաղադրիչում ԿԷԱ կայանների և ՀԾՄ-ի կողմից պարտադիր վաճառքի ենթակա, սակայն չպահանջված էլեկտրական էներգիան ներառվում է ՕԱՇ վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի քանակի մեջ:

127. ԿՈՒՊ բաղադրիչում ԿԷԱ կայանների և ՀԾՄ-ի կողմից պարտադիր վաճառքի ենթակա, սակայն չպահանջված էլեկտրական էներգիան ՕԱՇ փակումից հետո կարող է վաճառվել ՉՈՒՊ բաղադրիչում, այդ թվում արտահանվել Կանոնների 27-րդ գլխով սահմանված կարգով:

128. ԿՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոնների 25-րդ և 26-րդ գլուխներով սահմանված կարգավորումներով:

## ԳԼՈՒԽ 21 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ

129. ՉՈՒՊ բաղադրիչում առևտուրն իրականացվում է ՄԷԱ կայանների, ՀԾՄ-ի, ԻԷԱ-ների, ՄԱԻ-ների, Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, Որակավորված սպառողների, Հաղորդողի միջև, ինչպես նաև Կանոնների 133-րդ կետով սահմանված դեպքերում՝ ԿԷԱ կայանների միջև:

130. ՉՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի առևտուրն իրականացվում է բացառապես ՉՈՒՊ բաղադրիչի մասնակիցների միջև կնքված Գործարքների հիման վրա: Այդ Գործարքների շրջանակում էլեկտրական էներգիայի առուվաճառքի նախատեսվող քանակների մասին ՉՈՒՊ բաղադրիչի մասնակիցները պարտավոր են Կանոնների 131-րդ կետի համաձայն տեղեկացնել Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին:

131. ՉՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման Գործարքն ուժի մեջ մտած համարվելու նպատակով՝ Գործարք կնքած մասնակիցը պարտավոր է Գործարքը կնքվելուց հետո ոչ ուշ քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ այն դեպքերում երբ Գործարքն ենթադրում է առևտուր ՕՐԱ համար, ապա մինչև Առևտրային օրվան նախորդող օրը (այսուհետ՝ ՕՐԱՆ) ժամը 16:59-ն ներառյալ՝ ՇԿԾ-ի միջոցով Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին ներկայացնել Գործարքի մյուս կողմի՝ վաճառողի և գնվող էլեկտրական էներգիայի քանակի մասին տեղեկատվություն՝ ժամային կտրվածքով, որը պետք է պարունակի Գործարքի մյուս կողմի հաստատումը:

132. ՉՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքը կարող է փոփոխվել կամ գործողությունը դադարեցվել այն կնքած ԷՄՇ մասնակիցների կողմից ցանկացած ժամանակ, իսկ այն

դեպքում երբ Գործարքն ենթադրում է առևտուր ՕՐԱ համար, ապա մինչև Առևտրային օրվան նախորդող օրը (այսուհետ՝ ՕՐԱՆ) ժամը 16:59-ը ներառյալ: Գործարքի փոփոխության կամ դրա գործողության դադարեցման մասին ԷՄՇ մասնակիցը ՇԿԾ-ի միջոցով տեղեկացնում է Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին՝ ներկայացնելով Գործարքի մյուս կողմի հաստատումը:

133. ԿԷԱ կայանները Կանոնների 161-րդ կետով սահմանված կարգով ՕԱՇ-ի արդյունքների հրապարակումից հետո, իրավունք ունեն ՕԱՇ չպահանջված էլեկտրական էներգիան վաճառել ՉՈՒՊ բաղադրիչում ՕՐԱՆ ժամը 15:30-ից մինչև 16:59-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:

134. Շուկայի օպերատորը ՉՈՒՊ բաղադրիչի մասնակիցների Գործարքը՝ Կանոնների 131-րդ կետի համաձայն իրեն ներկայացվելուց հետո ոչ ուշ քան 1 ժամվա ընթացքում՝
   1) հաշվառում է ՇԿԾ-ում որպես կողմերի միջև կնքված Գործարք,
   2) հաշվառված Գործարքին համապատասխան մասնակիցների էլեկտրոնային վիրտուալ քարտերի համապատասխան ենթահաշիվներին հաշվեգրում է մասնակիցների՝ միմյանց առաքման ենթակա էլեկտրական էներգիայի քանակների մասին տվյալները, առանց վճարման ենթակա գումարների մասին տվյալների:

135. Էլեկտրական էներգիայի ներկրումը և արտահանումն ԷՄՇ ՉՈՒՊ բաղադրիչից իրականացվում է Կանոնների 27-րդ գլխով սահմանված կարգով:

136. ՉՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոնների 25-րդ և 26-րդ գլուխներով սահմանված կարգավորումներով:

## ԳԼՈՒԽ 22 ՕՐ ԱՌԱՋ ՇՈՒԿԱ

137. ՕԱՇ-ում առևտուրն իրականացվում է ՄԷԱ կայանների, ԿԷԱ կայանների, ՄԱԻ-ների, ՀԾՄ-ի՝ ԿՈՒՊ բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա, սակայն չպահանջված էլեկտրական էներգիայի մասով, Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, Որակավորված սպառողների, ինչպես նաև Հաղորդողի միջև:

138. ՕԱՇ-ում առևտուրն իրականացվում է ժամային կտրվածքով, իսկ գնվող ու վաճառվող էլեկտրական էներգիայի քանակներն ու գները որոշվում են ՇԿԾ միջոցով՝ Կանոնների ԳԼՈՒԽ 23-րդ գլխով սահմանված կարգով:

139. ՕԱՇ-ի բոլոր գործողություններն իրականացվում են հաջորդող մեկ Առևտրային օրվա համար և ավարտվում են ՕՐԱՆ՝ սույն Բաժնում սահմանված ժամկետներում:

140. ԷՄՇ մասնակիցների կողմից ՕԱՇ ներկայացվող վաճառքի Հայտերի գները չեն կարող գերազանցել Հանձնաժողովի կողմից սահմանված ՀԾՄ առավելագույն գինը, իսկ ԿԷԱ կայանների դեպքում՝ քան տոկոսով ավելի լինել Հանձնաժողովի սահմանած էլեկտրական էներգիայի սակագնից կամ ունենալ բացասական արժեք: Նման Հայտերը մերժվում են Շուկայի օպերատորի կողմից:

141. ՕԱՇ մասնակիցները կարող են ներկայացնել հետևյալ տեսակի Հայտեր.
   1) վաճառքի Հայտ՝ պարզ կամ աստիճանական,

2) գնման Հայտ՝ պարզ կամ աստիճանական:

142. ՕԱՇ մասնակիցների վաճառքի և գնման Հայտերը պետք է պարունակեն.

1) պարզ Հայտերի դեպքում մեկ գին ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածում գնվող կամ վաճառվող էլեկտրական էներգիայի համար՝ ներկայացված հետևյալ կերպ.

ա. Էլեկտրական էներգիայի գինը մեկ հարյուրերորդական միավոր ճշտությամբ արտահայտված ՀՀ դրամ/կՎտժ-ով,

բ. Էլեկտրական էներգիայի քանակը՝ արտահայտված կՎտժ-ով.

2) պարզ Հայտը կարող է ներկայացվել նաև առանց գնանշման, որտեղ.

ա. վաճառքի Հայտի դեպքում նշվում է միայն վաճառվող էլեկտրական էներգիայի քանակը, որի դեպքում Հայտի գինը ընդունվում է հավասար զրոյի,

բ. գնման Հայտի դեպքում նշվում է միայն պահանջվող էլեկտրական էներգիայի քանակը, որի դեպքում Հայտի գինը ընդունվում է հաշվեկշռման ծառայության մատուցման համար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնին հավասար.

3) աստիճանական Հայտերի դեպքում էլեկտրական էներգիայի գնման կամ վաճառքի խմբաքանակից կախված տարբեր գին-քանակ զույգեր ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածի ընթացքում: Նման գնման կամ վաճառքի Հայտը կարող է ներառել մինչև հինգ խմբաքանակ: Ընդ որում, էլեկտրական էներգիայի վաճառքի գինը յուրաքանչյուր հաջորդ խմբաքանակի համար պետք է բարձր լինի նախորդից, մինչդեռ էլեկտրական էներգիայի գնման գինը յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ցածր լինի նախորդից: Միևնույն ժամանակ էլեկտրական էներգիայի գնման կամ վաճառքի Հայտերում գին-քանակ զույգերը պետք է լինեն միմյանցից անկախ այնպես, որ վաճառողը կարողանա վաճառել, իսկ գնորդը կարողանա գնել ցանկացած գին-քանակ զույգ առանձին: Վաճառքի և գնման Հայտերը պետք է ներառեն սույն կետի 1-ին ենթակետի ա և բ պարբերություններում նշված տեղեկատվությունն առաջարկվող խմբաքանակներից յուրաքանչյուրի համար:

143. Էլեկտրական էներգիայի ներկրումը և արտահանումն ԷՄՇ ՕԱՇ հատվածում իրականացվում է Կանոնների 27-րդ գլխով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 23 ՕԱՇ ՔԼԻՐԻՆԳԸ

144. ՕԱՇ քլիրինգի նպատակով ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացվող գնման և վաճառքի բոլոր Հայտերն ագրեգացվում են այնպես, որ ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ձևավորվի առաջարկի և պահանջարկի մեկական գումարային կոր: Առաջարկի գումարային կորը ստացվում է միացնելով յուրաքանչյուր գնային քայլով առաջարկվող բոլոր վաճառքի Հայտերի քանակությունները, իսկ պահանջարկի գումարային կորը՝ միացնելով յուրաքանչյուր գնային քայլով պահանջվող բոլոր գնման Հայտերի քանակությունները:

145. Այն դեպքում, երբ տվյալ Առևտրային ժամանակահատվածի առաջարկի և պահանջարկի գումարային կորերը հատվում են, ապա այդ ժամանակահատվածի քլիրինգային գինը, ինչպես նաև ամբողջությամբ, մասամբ բավարարված կամ չբավարարված Հայտերը որոշվում են Կանոնների 147-152-րդ կետերի համաձայն:

146. Այն դեպքում, երբ տվյալ Առևտրային ժամանակահատվածի առաջարկի և պահանջարկի գումարային կորերը չեն հատվում, ապա այդ ժամանակահատվածի քլիրինգային գինը, ինչպես նաև ամբողջությամբ, մասամբ բավարարված կամ չբավարարված Հայտերը որոշվում են Կանոնների 153-156-րդ կետերի համաձայն:

147. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են միայն գնային մեկ կետում և քանակական մեկից ավել կետերում, իսկ սահմանային Վաճառքի հայտի քանակը հավասար է սահմանային Գնման Հայտի քանակին, ապա.

1) քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ ժամանակահատվածի համար հավասար է հատման կետում ձևավորված գնին,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
5) գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին, որը հավասար է գնման Հայտերի քանակին:

148. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են միայն մեկ կետում, իսկ սահմանային վաճառքի Հայտի քանակը գերազանցում է սահմանային գնման Հայտի քանակը, ապա.

1) Քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ ժամանակահատվածի համար հավասար է հատման կետի գնին, որը որոշվում է սահմանային վաճառքի Հայտով,
2) Վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) Վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային վաճառքի Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային գնման Հայտով: Եթե սահմանային վաճառքի Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ մասնակիցների կողմից

ներկայացված՝ նույն գին ունեցող վաճառքի Հայտերից, ապա գնման Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր վաճառքի Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,

5) գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված գնման Հայտերի ընդհանուր քանակին:

149. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են գնային մեկ կետում և քանակական մեկից ավել կետերում, իսկ սահմանային վաճառքի Հայտի քանակը գերազանցում է սահմանային գնման Հայտի քանակը, ապա.

1) Քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի համար հավասար է հատման կետերում ձևավորված գնին,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) Վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային վաճառքի Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային գնման Հայտով: Եթե սահմանային վաճառքի Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄԾ մասնակիցների կողմից ներկայացված նույն գին ունեցող վաճառքի Հայտերից, ապա գնման Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր վաճառքի Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,
5) Գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) Գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված Վաճառքի հայտերի ընդհանուր քանակին:

150. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են միայն մեկ կետում, իսկ սահմանային գնման Հայտի քանակը գերազանցում է սահմանային վաճառքի Հայտի քանակը, ապա.

1) Քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի համար հավասար է հատման կետի գնին, որը որոշվում է սահմանային գնման Հայտով,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) Վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային գնման Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային վաճառքի Հայտով: Եթե սահմանային գնման Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ առևտրի մասնակիցների կողմից ներկայացված՝ նույն գին ունեցող գնման Հայտերից, ապա վաճառքի հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր գնման Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,
5) Գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) Գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին:

151. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են գնային մեկ կետում և քանակական մեկից ավել կետերում, իսկ սահմանային գնման Հայտի քանակը գերազանցում է սահմանային վաճառքի Հայտի քանակը, ապա.
1) քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի համար հավասար է հատման կետերում ձևավորված գնին,
2) Վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնին,
3) Վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային գնման Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային վաճառքի Հայտով: Եթե սահմանային գնման Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված՝ նույն գին ունեցող գնման Հայտերից, ապա վաճառքի Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր գնման Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,

5) գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին:

152. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը հատվում են մեկից ավել գնային կետում և քանակական մեկ կետում, իսկ գնման Հայտի քանակը հավասար է վաճառքի հայտի քանակին, ապա.
1) քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակաշրջանի համար որոշվում է սահմանային վաճառքի Հայտով,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
5) գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը հավասար է կամ ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) Շուկայի բավարարված քանակը հավասար է բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին, որն էլ իր հերթին հավասար է բավարարված գնման Հայտերին: ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված գնման և վաճառքի Հայտերը, որոնք հանգեցնում են ՕԱՇ-ում ընդհանուր բավարարված քանակի աճին, անկախ գնից՝ չեն բավարարվում:

153. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը չեն հատվում, քանի որ սահմանային վաճառքի Հայտի քանակը չի բավարարում որևէ գնման Հայտի քանակը վաճառքի Հայտում նշված գնով, ապա լրացուցիչ զրոյական քանակ-գին զույգը, որը հավասար է համապատասխան գնման Հայտին, համարվում է սահմանային վաճառքի Հայտ: Նման դեպքերում ՕԱՇ քլիրինգն իրականացվում է հետևյալ կարգով.
1) քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի համար հավասար է հատման կետի գնին, որը որոշվում է սահմանային գնման Հայտով,
2) Վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) Վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային գնման Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը

բավարարվում է սահմանային վաճառքի Հայտով: Եթե սահմանային գնման Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված՝ նույն գին ունեցող գնման Հայտերից, ապա վաճառքի Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր գնման Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,

5) գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին:

154. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը չեն հատվում, քանի որ սահմանային գնման Հայտի գինը գերազանցում է սահմանային վաճառքի Հայտին և սահմանային վաճառքի Հայտի քանակը հավասար է սահմանային գնման Հայտի քանակին, ապա ՕԱՇ քլիրինգն իրականացվում է հետևյալ կարգով.

1) քլիրինգային գինն Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի համար որոշվում է սահմանային վաճառքի Հայտով,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը հավասար է կամ ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
3) վաճառքի Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
4) Սահմանային վաճառքի Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային գնման Հայտով: Եթե սահմանային վաճառքի Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված՝ նույն գին ունեցող վաճառքի Հայտերից, ապա գնման Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր վաճառքի Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,
5) Գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
6) Գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված վաճառքի Հայտերի ընդհանուր քանակին, որն էլ իր հերթին հավասար է բավարարված գնման Հայտերին:

155. Այն դեպքում, երբ գումարային առաջարկի և պահանջարկի կորերը չեն հատվում, քանի որ սահմանային գնման Հայտի գինն ավելի բարձր է քան սահմանային վաճառքի Հայտինը, իսկ սահմանային վաճառքի Հայտի քանակը գերազանցում է սահմանային գնման Հայտի քանակը, ապա.

1) Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գինը որոշվում է սահմանային վաճառքի Հայտով,
2) վաճառքի Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակաշրջանի քլիրինգային գնից,
3) վաճառքի հայտը չի բավարարվում, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակաշրջանի քլիրինգային գնից,
4) Սահմանային վաճառքի Հայտը մասամբ բավարարվում է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակահատվածի քլիրինգային գնով այն քանակի չափով, որը բավարարվում է սահմանային գնման Հայտով: Եթե սահմանային վաճառքի Հայտը հավաքական է, այսինքն ձևավորվել է տարբեր ԷՄՇ մասնակիցների կողմից ներկայացված՝ նույն գին ունեցող վաճառքի Հայտերից, ապա գնման Հայտերը բավարարելու համար էլեկտրական էներգիայի մնացորդային քանակը բաշխվում է այդ մասնակիցների միջև՝ յուրաքանչյուր վաճառքի Հայտում սահմանված քանակի համամասնությամբ,
5) Գնման Հայտն ամբողջությամբ բավարարվում է, եթե դրա գինը բարձր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակաշրջանի քլիրինգային գնից,
6) Գնման Հայտը չի բավարարվում, եթե դրա գինն ավելի ցածր է Առևտրային օրվա տվյալ Առևտրային ժամանակաշրջանի քլիրինգային գնից,
7) Շուկայի բավարարված քանակը հավասար է բոլոր բավարարված գնման Հայտերի ընդհանուր քանակին:

156. Եթե գումարային առաջարկի և գումարային պահանջարկի կորերը չեն հատվում, քանի որ առաջին վաճառքի Հայտի գինը գերազանցում է առաջին գնման Հայտի գինը, ապա Շուկայի օպերատորը տեղեկացնում է մասնակիցներին, որ ՕԱՇ-ը չի բավարարվում:

## ԳԼՈՒԽ 24 ՕԱՇ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

157. ՕԱՇ Հայտերի ներկայացումը մեկնարկում է ՕՐԱՆ ժամը 10:29-ից մինչև ՕՐԱՆ ժամը 12:59-ը ներառյալ, որն ՕԱՇ մուտքի փակման ժամն է:

158. ԷՄՇ առևտրի մասնակիցները մինչև ՕԱՇ մուտքի փակումն իրավունք ունեն փոփոխել կամ չեղարկել ներկայացված Հայտերը: ԷՄՇ առևտրի մասնակիցների ՕԱՇ հայտերի գնային առաջարկները ՇԿԾ-ում Շուկայի օպերատորի համար տեսանելի են դառնում միայն ՕԱՇ մուտքի փակումից հետո:

159. Շուկայի օպերատորը ՇԿԾ միջոցով մասնակիցների կողմից Հայտերում նշված էլեկտրական էներգիայի գնման և վաճառքի քանակի տվյալների հիման վրա իրականացնում է ՕԱՇ Հայտերի համապատասխանության գնահատում և մինչև ՕՐԱՆ ժամը 13:59-ը ներառյալ հաստատում կամ ՕԱՇ մասնակցին է ուղարկում Հայտը չտկելու

առաջարկ՝ համապատասխան հիմնավորումներով: Շուկայի օպերատորի կողմից ՕԱՇ Հայտը շտկելու առաջարկ ստացած մասնակիցները մինչև ՕՐԱՆ 14:29-ը ներառյալ պարտավոր են Շուկայի օպերատորին ներկայացնել Հայտի վերջնական տարբերակը:

160. Շուկայի օպերատորն ՕՐԱՆ ժամը 14:30-ին ստացված բոլոր Հայտերի հիման վրա ՇԿԾ-ի միջոցով իրականացնում է ՕԱՇ քլիրինգը:

161. ՕՐԱՆ մինչև ժամը 14:59-ը ներառյալ Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում և իր կայք էջում հրապարակում է ՕԱՇ քլիրինգային գները և էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի Գործարքների մասին ամփոփ տվյալները՝ ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների:

162. ՕԱՇ արդյունքներով բավարարված վաճառքի և գնման Հայտ ներկայացված ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև Գործարքները համարվում են կնքված Կանոնների 161-րդ կետում նշված ժամկետից:

163. ՕԱՇ գործարքները կնքվում են այնպես, որ ՕԱՇ յուրաքանչյուր ԷՄՇ առևտրի մասնակցի վաճառած էլեկտրական էներգիայի քանակը բաշխվի գնորդների միջև գնված էլեկտրական էներգիայի քանակությունների համամասնությամբ ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների: Ընդ որում գնորդների միջև էլեկտրական էներգիայի քանակի բաշխման ընթացքում կիրառվում է մաթեմատիկական կլորացում, իսկ եթե դրա արդյունքում վաճառված կամ գնված էլեկտրական էներգիան գերազանցել է հայտերում նշված քանակը, ապա իրականացվում է մաթեմատիկական կլորացում պակասորդով: Եթե նշված հաշվարկի արդյունքում ՕԱՇ-ում առաջացել է քլրինգային գնով վաճառված էլեկտրական էներգիայի ավելցուկ, ապա ավելի մեծ քանակի էլեկտրական էներգիա վաճառած և վաճառքի հայտն առաջինը ներկայացրած մասնակցի մնացորդը մեկական միավորով բաշխվում է ավելի մեծ քանակությամբ էլեկտրական էներգիա գնած և գնման հայտն առաջինը ներկայացրած մասնակիցների միջև ըստ առաջնահերթության՝ մինչև ավելցուկի ամբողջական բաշխումը: Նույն մոտեցումը կիրառվում է, երբ ՕԱՇ-ում առաջացել է քլրինգային գնով վաճառված էլեկտրական էներգիայի պակասորդ:

164. Շուկայի օպերատորը ՇԿԾ-ի միջոցով հաշվառելով ՕԱՇ կնքված Գործարքները, ՕՐԱՆ մինչև ժամը 19:59-ը ներառյալ ԷՄՇ մասնակիցների էլեկտրոնային վիրտուալ քարտերին հաշվեգրում է վաճառված և գնված էլեկտրական էներգիայի քանակը և արժեքներն ըստ ՕՐԱՆ Առևտրային ժամանակահատվածների:

165. ԷՄՇ ՕԱՇ հատվածում կնքված Գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոնների 25-րդ և 26-րդ գլուխներով սահմանված կարգավորումներով:

## ԳԼՈՒԽ 25 ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ՇՈՒԿԱ

166. Հաշվեկշռման շուկայում իրականացվում է հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առևտուրը՝ մի կողմից ՀԾՄ-ի, մյուս կողմից ՀՊԿԽ և ՀՊԿԻ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի այլ մասնակիցների միջև:

167. Հաշվեկշռման շուկան կարգավորվող շուկա է, որում իրականացված Գործարքները կնքվում են ՇԿԾ-ի միջոցով Շուկայի օպերատորի կողմից իրականացվող անհաշվեկշռույթների հաշվարկի արդյունքում:
168. ՀԾՄ-ն ՕՐԱՆ մինչև ժամը 15:29-ը ներառյալ ՇԿԾ-ում հրապարակում է ՕՐԱ իր կողմից հաշվեկշռման նպատակով էլեկտրական էներգիայի վաճառքի գինն Առևտրային բոլոր ժամանակահատվածների համար, եթե այն ցածր է Հանձնաժողովի կողմից սահմանած ՀԾՄ առավելագույն գնից: ՀԾՄ հաշվեկշռման նպատակով էլեկտրական էներգիայի վաճառքի գինը չի կարող ավել լինել ՕԱՇ քլիրինգային գնից քան տոկոսով, եթե ՕԱՇ քլիրինգը կայացել է և այդ գինը բարձր է զրոյից: Մնացած բոլոր դեպքում ՕՐԱ համար ՀԾՄ հաշվեկշռման էլեկտրական էներգիայի գինն ընդունվում է հավասար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնին, եթե ՀԾՄ-ն հաշվեկշռման նպատակով էլեկտրական էներգիայի վաճառքի գին չի հրապարակել: ՀԾՄ-ն պարտավոր է ենթարկվել Համակարգի օպերատորի՝ ՕՐԱ պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով տրված կարգավարական բոլոր հրահանգներին:
169. ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներն անհաշվեկշռույթների արդյունքում առաջացած էլեկտրական էներգիայի ավելցուկը վաճառում, իսկ պակասորդը գնում են ՀԾՄ-ից՝ Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

## ԳԼՈՒԽ 26 ԱՆՀԱՇՎԵԿՇՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

170. Անհաշվեկշռույթները հաշվարկվում են Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ-ի միջոցով յուրաքանչյուր ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի համար ըստ ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածների:
171. Յուրաքանչյուր ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակից ՕՐԱՆ մինչև ժամը 17:59-ը ներառյալ ՇԿԾ-ի միջոցով Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին է ներկայացնում ՕՐԱ ընթացքում առաքման, արտահանման, ներկրման, ինչպես նաև 10 ՄՎտ և ավել հզորությամբ Հաշվառման կետերում սպառման ենթակա էլեկտրական էներգիայի քանակները՝ ըստ բոլոր Հաշվառման կետերի և ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածների (այսուհետև՝ Գործարքների տեղաբաշխում):
172. Յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից ներկայացված Գործարքների տեղաբաշխումը պետք է համապատասխանի տվյալ մասնակցի էլեկտրոնային վիրտուալ քարտում նշված տեխնիկական բնութագրին՝ հաշվի առնելով նաև անպատրաստականության վերաբերյալ տեղեկատվությունը:
173. Համակարգի օպերատորը ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցների կողմից ներկայացված Գործարքների տեղաբաշխման հիման վրա իրականացնում է համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների գնահատում հիմք ընդունելով Հաղորդման ցանցային կանոնների պահանջները : Համակարգի օպերատորն իրավունք ունի առաջարկել ՀՊԿԻ և ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցներին վերանայել Գործարքների տեղաբաշխումը, երբ վերջիններիս կողմից առաջարկվող տարբերակը թույլ չի տալիս ապահովել համակարգի

հուսալիության և անվտանգության ցուցանիշները և դրանք հնարավոր չէ Հաղորդման ցանցային կանոններով սահմանված կարգով կարգավորել ՀԾՄ-ի միջոցով:

174. Այն դեպքում, երբ Համակարգի օպերատորը ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից առաջարկվող Գործարքների տեղաբաշխման փոփոխությունը համարում է անհրաժեշտ, ապա ՕՐԱՆ մինչև ժամը 19:29-ը ներառյալ ՇԿԾ-ի միջոցով տվյալ ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցին է ուղարկում Գործարքների տեղաբաշխման իր առաջարկվող տարբերակը՝ համապատասխան հիմնավորումներով: ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցը պարտավոր է ընդունել և ՕՐԱ ընթացքում առաջնորդվել Համակարգի օպերատորի կողմից առաջարկված Գործարքների տեղաբաշխման տարբերակով:

175. Յուրաքանչյուր ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի անհաշվեկշռույթների զուտ ծավալը հաշվարկվում է Շուկայի օպերատորի կողմից՝ ՇԿԾ-ի միջոցով հետևյալ կերպ.

1) որոշվում է ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի Հաշվառման կետերից յուրաքանչյուրում ՕՐԱ փաստացի հաշվառված՝ առաքված, սպառված, արտահանված կամ ներկրված էլեկտրական էներգիայի քանակն ըստ Առևտրային ժամանակահատվածների,

2) որոշվում է ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի ՕՐԱ անհաշվեկշռույթների զուտ ծավալը՝ փաստացի հաշվառման տվյալները ըստ Առևտրային ժամանակահատվածների համեմատելով վերջիններիս կնքած Գործարքների հետ: Ընդ որում, էլեկտրական էներգիայի միջսահմանային առևտրի արդյունքում առաջացած անհաշվեկշռույթների հաշվարկն իրականացվում է առանձին, իսկ հաշվարկված անհաշվեկշռույթները համամասնորեն բաշխվում են ներկրում և արտահանում իրականացրած ԷՄՇ մասնակիցների միջև կնքված Գործարքների համամասնությամբ՝ ժամային կտրվածքով: Անհաշվեկշռույթների հաշվարկի ժամանակ նվազագույն չափման միավոր է ընդունվում 1 կՎտժ-ը, իսկ դրանից փոքր միավորները ենթարկվում են մաթեմատիկական կլորացման:

176. Յուրաքանչյուր ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցին վերագրվող անհաշվեկշռույթների դիմաց վճարումները հաշվարկվում են յուրաքանչյուր ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածի համար հետևյալ կերպ.

1) Եթե Առևտրային ժամանակահատվածում ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի անհաշվեկշռույթների զուտ ծավալը բացասական է, որի արդյունքում վերջինս էլեկտրական էներգիա է գնել ՀԾՄ-ից , ապա էլեկտրական էներգիայի այդ քանակի և ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից Կանոնների 168-րդ կետի համաձայն սահմանված գնի արտադրյալին հավասար գումարը դեբետագրվում է վերջինիս հաշվեկշռման ենթահաշվին՝ որպես ՀԾՄ-ին վճարման ենթակա գումար:

2) Եթե Առևտրային ժամանակահատվածում ՀՊԿԻ կամ ՀՊԿԽ կարգավիճակ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի անհաշվեկշռույթների զուտ ծավալը դրական է, որի արդյունքում վերջինս էլեկտրական էներգիա է վաճառել ՀԾՄ-ին, ապա էլեկտրական էներգիայի այդ քանակի և ԷՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում վաճառքի համար սահմանված նվազագույն սակագնի արտադրյալին հավասար գումարը կրեդիտագրվում է վերջինիս հաշվեկշռման ենթահաշվին, որպես ՀԾՄ-ի կողմից վճարման ենթակա գումար:

177. Շուկայի օպերատորն անհաշվեկշռույթների համար Կանոնների 176-րդ կետով սահմանված հաշվեգրումներն իրականացնում և տեղադրում է ՇԿԾ Առևտրային օրվան հաջորդող օրը (այսուհետ՝ ՕՐԱՀ) մինչև ժամը 08:59-ը ներառյալ:

# ԲԱԺԻՆ 7

# ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ, ՏԱՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՓՈԽՀՈՍՔԵՐԸ

## ԳԼՈՒԽ 27 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

178. Էլեկտրական էներգիայի միջպետական առևտուրն իրականացվում է ԷՄՇ մասնակիցների կողմից էլեկտրական էներգիայի արտահանման կամ ԷՄՇ-ում վաճառքի կամ սեփական պահանջարկի բավարարման նպատակով էլեկտրական էներգիայի ներկրման վերաբերյալ օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ ուղիղ պայմանագրեր կնքելու միջոցով:

179. Էլեկտրական էներգիայի ներկրումն իրականացվում է Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, ՄԱԻ-ների, Որակավորված սպառողների և ՀԾՄ-ի կողմից հետևյալ դեպքերում.

1) Երաշխավորված մատակարարը և Մատակարարներն էլեկտրական էներգիան ներկրում են իրենց հաշվեկշռման խմբում գտնվող ԷՄՇ մասնակիցների կամ սպառողների էլեկտրական էներգիայի պահանջարկի բավարարման նպատակով,
2) ՄԱԻ-ներն էլեկտրական էներգիա ներկրում են իրենց հաշվեկշռման խմբում գտնվող ԷՄՇ մասնակիցների էլեկտրական էներգիայի պահանջարկի բավարարման, ինչպես նաև ՉՈՒՊ բաղադրիչում և ՕԱՇ-ում վաճառելու նպատակով,
3) Որակավորված սպառողներն էլեկտրական էներգիան ներկրում են իրենց պահանջարկի բավարարման նպատակով:

180. Էլեկտրական էներգիայի արտահանումն իրականացվում է ՄԱԻ-ների, ՄԷԱ կայանների, Կանոններով նախատեսված դեպքերում նաև ՀԾՄ-ի և ԿԷԱ կայանների կողմից հետևյալ դեպքերում.

1) ՄԱԻ-ները, ՄԷԱ կայանները և ՀԾՄ-ն, ինչպես նաև ԿԷԱ կայանները կարող են արտահանել ԷՄՇ ՉՈՒՊ բաղադրիչում վաճառքի ենթակա էլեկտրական էներգիան,

2) ՄԱԻ-ները կարող են արտահանել ՕԱՇ բաղադրիչում վաճառքի ենթակա էլեկտրական էներգիան,
3) ՀԾՄ կարող է արտահանել անհաշվեկշռույթների արդյունքում ԷՄՇ մասնակիցներից գնված էլեկտրական էներգիան:

181. Էլեկտրական էներգիայի ներկրման կամ արտահանման Գործարքն ուժի մեջ մտած համարվելու նպատակով՝ Գործարք կնքած մասնակիցը պարտավոր է այն կնքվելուց հետո ոչ ուշ քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ այն դեպքերում երբ Գործարքն ենթադրում է առևտուր ՕՐԱ համար, ապա մինչև ՕՐԱՆ ժամը 16:59-ն ներառյալ՝ ՇԿԾ-ի միջոցով Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին ներկայացնել ներկրվող կամ արտահանվող Էլեկտրական էներգիայի քանակի մասին տեղեկատվություն՝ ժամային կտրվածքով:

182. Էլեկտրական էներգիայի ներկրման կամ արտահանման Գործարքը կարող է փոփոխվել կամ գործողությունը դադարեցվել այն կնքած ԷՄՇ մասնակիցների կողմից ցանկացած ժամանակ, իսկ այն դեպքում երբ Գործարքն ենթադրում է առևտուր ՕՐԱ համար, ապա մինչև Առևտրային օրվան նախորդող օրը (այսուհետ՝ ՕՐԱՆ) ժամը 16:59-ն ներառյալ: Գործարքի փոփոխության կամ դրա գործողության դադարեցման մասին ԷՄՇ մասնակիցը ՇԿԾ-ի միջոցով տեղեկացնում է Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին՝ ներկայացնելով Գործարքի մյուս կողմի հաստատումը:

183. Էլեկտրական էներգիայի արտահանման և ներկրման մասին տվյալները պետք է ներառվեն Կանոնների 171-րդ կետով նախատեսված Գործարքների տեղաբաշխման մեջ:

184. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորը Կանոններով սահմանված կարգով համակարգում են Էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի իրականացման գործընթացը:

185. Էլեկտրական էներգիայի ներկրման դեպքում վաճառողն այն գնորդին է հանձնում Ներկրման կետում:

186. Էլեկտրական էներգիայի միջպետական առևտրի նպատակով կնքված էլեկտրական էներգիայի ներկրման կամ արտահանման Գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոնների 25-րդ և 26-րդ գլուխներով սահմանված կարգավորումներով:

## ԳԼՈՒԽ 28 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԱՐԱՆՑՈՒՄԸ

187. Էլեկտրական էներգիայի տարանցումն իրականացվում է ՄԱԻ-ների միջոցով տարանցիկ փոխադրման պատվիրատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

188. Էլեկտրական էներգիայի տարանցումը դիտարկվում է որպես ՄԱԻ-ի կողմից իրականացվող էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման միաժամանակյա տեղի ունեցող Գործարք և դրա նկատմամբ կիրառվում են Կանոնների՝ էլեկտրական էներգիայի ներկրմանը և արտահանմանը վերաբերող բոլոր դրույթները հավասարապես, իսկ Կանոնների 45-րդ կետով նախատեսված ԷՄՇ ծառայություններ մատուցողներին վճարումներում հաշվի չի առնվում ներկրված էլեկտրական էներգիայի քանակը:

189. Էլեկտրական էներգիայի տարանցման նպատակով կնքված էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման Գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և Գործարքի կողմ հանդիսացող ԷՄՇ մասնակիցները ղեկավարվում են Կանոնների 25-րդ և 26-րդ գլուխներով սահմանված կարգավորումներով:
190. Տարանցիկ փոխադրումն իրականացվում է, երբ այն չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին, չի նվազեցնում Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները և չի խոչընդոտում ՀԱԻՐ ուղղությամբ ՀԾՄ-ի արդեն իսկ կնքված պայմանագրերի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումը:
191. Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել տարանցումը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների նվազման կամ նվազման վտանգի դեպքում:

## ԳԼՈՒԽ 29 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽՀՈՍՔԵՐԸ

192. Փոխհոսքերն իրականացվում են բացառապես ՀԾՄ-ի կողմից՝ ՀԱԻՐ ուղղությամբ՝ Հանձնաժողովի տրամադրած էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի, ինչպես նաև ՀԱԻՐ փոխհոսքերի պայմանագրի հիման վրա:
193. ՀԾՄ-ն փոխհոսքերի իրականացման նպատակով համապատասխան պայմանագրեր է կնքում Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի ու Հաղորդողի, իսկ Բաշխման ցանցն այդ նպատակով օգտագործելու դեպքում նաև Բաշխողի հետ:
194. ՀԾՄ-ն իր պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով իրավունք ունի Կանոններում սահմանված դեպքերում ԷՄՇ-ում գնել էլեկտրական էներգիա: ՀԱԻՐ փոխհոսքերի ապահովման նպատակով չի կարող գնվել Որոտանի կասկադի էլեկտրական էներգիան:
195. Փոխհոսքերի համակարգումն իրականացում է Համակարգի օպերատորը:
196. Համակարգի օպերատորը փոխհոսքերը սկսելու, ընդհատելու, վերսկսելու և դադարեցնելու մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել է ՀԾՄ-ին և Շուկայի օպերատորին Կանոնների 181-րդ կետով սահմանված կարգով:
197. Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել փոխհոսքերը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների նվազման կամ նվազման վտանգի դեպքում:
198. Վթարային և անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակում ՀԱԻՐ կամ ՀԱՎՐԱ ուղղություններով փոխհոսքերն իրականացվում են ՀԾՄ-ի կողմից՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:

# ԲԱԺԻՆ 8

# ԷՄՇ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

## ԳԼՈՒԽ 30 ԷՄՇ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

199. ԷՄՇ-ում էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու, ինչպես նաև ծառայություններ ստանալու նպատակով ԷՄՇ առևտրի մասնակիցները, բացառությամբ Երաշխավորված մատակարարի, Շուկայի օպերատորին ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ առևտրային բանկի կողմից տրամադրված երաշխիք՝ սույն գլխով, Կանոնների 65-րդ կետով և Կանոնների N1 հավելվածով սահմանված կարգով:

200. Երաշխիք տված բանկն ԷՄՇ առևտրի մասնակցի (պրինցիպալի) դիմումի համաձայն գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ հանդեպ, պրինցիպալի կողմից Կանոններով սահմանված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ որպես բենեֆիցիար հանդես եկող Շուկայի օպերատորի կողմից ներկայացված գրավոր պահանջի հիման վրա, անվիճելի և անառարկելի կարգով պահանջում նշված հաշվեհամարին վճարել դրամական գումար՝ երաշխիքի գումարի սահմաններում:

201. Բանկային երաշխիքի՝

   1) գործողության ժամկետը չի կարող պակաս լինել 45 օրից,
   2) մեծությունը չի կարող պակաս լինել հինգ միլիոն դրամից:

202. ԷՄՇ-ում գնված, ներկրված էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն երաշխավորելու նպատակով Հայտ ներկայացնելիս ԷՄՇ առևտրի մասնակցի բանկային երաշխիքի հասանելի մնացորդը ՇԿԾ-ում նվազեցվում է հետևյալ չափերով՝

   1) ԿՈՒԴ բաղադրիչում գնման Հայտ ներկայացնելու դեպքում Հայտում նշված էլեկտրական էներգիայի քանակի և ԿՈՒԴ բաղադրիչում մասնակցող ԿԷԱ կայաններից ամենաբարձր սակագին ունեցող կայանի սակագնի արտադրյալի արդյունքում ստացված էլեկտրական էներգիայի արժեքի հարյուր հիսուն տոկոսի չափով,
   2) ՕԱՇ-ում գնման Հայտ ներկայացնելու դեպքում Հայտում նշված էլեկտրական էներգիայի քանակի և հաշվեկշռման ծառայության մատուցման համար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնի արտադրյալի արդյունքում ստացված էլեկտրական էներգիայի արժեքի չափով:

203. ԷՄՇ մասնակցի Կանոնների 202-րդ կետի համաձայն բանկային երաշխիքի նվազեցված գումարը ԿՈՒԴ բաղադրիչում, ՕԱՇ-ում և ՉՈՒԴ բաղադրիչում կնքված էլեկտրական էներգիայի գնման, ներկրման Գործարքների արդյունքում ՇԿԾ-ում ճշգրտվում է հետևյալ կերպ՝

   1) ԿՈՒԴ բաղադրիչի և ՕԱՇ դեպքում՝

ա. գնված էլեկտրական էներգիայի արժեքի չափով,

բ. Համակարգի օպերատորի ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի և Հանձնաժողովի կողմից համակարգի օպերատորի ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

գ. Շուկայի օպերատորի ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի և Հանձնաժողովի կողմից շուկայի օպերատորի ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

դ. Հաղորդողի ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի և Հանձնաժողովի կողմից հաղորդման ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

ե. Բաշխողի ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի և նախորդ ամիս տվյալ ԷՄՇ առևտրի մասնակցի փաստացի ձևավորված բաշխման ծառայությունների միջին կշռված արժեքի չափով: Այն դեպքում, երբ տվյալ ԷՄՇ առևտրի մասնակցին նախորդ ամիս բաշխման ծառայություններ չեն մատուցվել, ապա երաշխիքի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի և բաշխման ցանցի հետ ունեցած Հաշվառման կետերում կիրառվող բաշխման ծառայությունների մատուցման սակագներից ամենաբարձրի արտադրյալով, վ

զ. Հաշվեկշռման ծառայության համար՝ սույն ենթակետի ա. պարբերությունում կնքված Գործարքների շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակի մեկ քառորդի և հաշվեկշռման ծառայության արժեքի առավելագույն սակագնի արտադրյալով:

2) ՉՈՒՊ բաղադրիչի դեպքում՝ սույն կետի 1-ին ենթակետի բ, գ, դ, ե, զ պարբերություններով սահմանված ծառայությունների ամսական արժեքի հանրագումարի չափով, հաշվի առնելով ՉՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքի շրջանակում գնված էլեկտրական էներգիայի քանակը՝ Գործարքի կնքմանը հաջորդող ամսվա համար:

204. ԷՄՇ մասնակցի Կանոնների 203-րդ կետի համաձայն բանկային երաշխիքի նվազեցված գումարը ԿՈՒՊ բաղադրիչում, ՕԱՇ-ում և ՉՈՒՊ բաղադրիչում Կանոնների 177-րդ կետի համաձայն Շուկայի օպերատորի կողմից անհաշվեկշռույթների հաշվեգրումներն իրականացնելուց հետո ՕՐԱՀ մինչև ժամը 09:59-ը ներառյալ ՇԿԾ-ում ճշգրտվում է հետևյալ կերպ՝

1) Համակարգի օպերատորի փաստացի մատուցած ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է ՕՐԱ համար փաստացի գնված էլեկտրական էներգիայի

քանակի և Հանձնաժողովի կողմից համակարգի օպերատորի ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

2) Շուկայի օպերատորի փաստացի մատուցած ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է ՕՐԱ համար փաստացի գնված էլեկտրական էներգիայի քանակի և Հանձնաժողովի կողմից շուկայի օպերատորի ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

3) Հաղորդողի փաստացի մատուցած ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է ՕՐԱ համար փաստացի գնված էլեկտրական էներգիայի քանակի և Հանձնաժողովի կողմից հաղորդման ծառայության համար սահմանած սակագնի արտադրյալով,

4) Բաշխողի փաստացի մատուցած ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է ՕՐԱ համար փաստացի գնված էլեկտրական էներգիայի քանակի և ԷՄԾ առևտրի մասնակցի տվյալ միացման կետի բաշխման ծառայությունների մատուցման սակագնի արդյունքում ձևավորված բաշխման ծառայության արժեքի չափով, իսկ եթե ԷՄԾ մասնակիցը միացած է բաշխման ցանցի տարբեր լարման մակարդակներով, ապա տվյալ համապատասխանաբար՝ լարման մակարդակներով անցած էլեկտրական էներգիայի քանակի և տվյալ լարման մակարդակի համար սահմանված բաշխման ծառայությունների մատուցման սակագների արտադրյալի արդյունքում ձևավորված ծառայությունների արժեքի հանրագումարի չափով,

5) Հաշվեկշռման փաստացի մատուցած ծառայության արժեքի չափով, որի մեծությունը որոշվում է ՕՐԱ համար Հաշվեկշռողից փաստացի գնած էլեկտրական էներգիայի արժեքի չափով:

205. Էլեկտրական էներգիա տարանցելու կամ ներկրելու դեպքում Գործարքը ՇԿԾ-ում գրանցելիս Հաշվեկշռման ծառայության դիմաց վճարումները երաշխավորելու նպատակով ԷՄԾ առևտրի մասնակցի բանկային երաշխիքի հասանելի մնացորդը ՇԿԾ-ում նվազեցվում է ներկրվող էլեկտրական էներգիայի քանակի և Հաշվեկշռման ծառայության մատուցման համար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնի արտադրյալի արդյունքում ստացված էլեկտրական էներգիայի արժեքի չափով:

206. ԷՄԾ առևտրի մասնակցի բանկային երաշխիքի թույլատրելի սահմանաչափը կազմում է վերջինիս կողմից արդեն իսկ կնքված և չվճարված Գործարքների ու ձեռքբերված ծառայությունների, ինչպես նաև նոր կնքվող Գործարքների և ձեռքբերվող ծառայությունների արժեքի հանրագումարը:

207. Բանկային երաշխիքի առավելագույն թույլատրելի սահմանաչափը լրանալուն պես ԷՄԾ մասնակիցը զրկվում է ԷՄԾ-ում նոր Հայտեր ներկայացնելու ու Գործարքներ կնքելու իրավունքից: Այն դեպքում, երբ տվյալ ԷՄԾ մասնակիցը Գործարքի շրջանակում գնված, ներկրված էլեկտրական էներգիայի ու մատուցված ծառայությունների դիմաց վաճառողների օգտին կատարել է բոլոր վճարումները, ապա վերջինիս կողմից Շուկայի օպերատորին ներկայացված բանկային երաշխիքն այդ չափով համարվում է պարտավորությունից ազատված, և ԷՄԾ տվյալ մասնակիցը դարձյալ ստանում է ԷՄԾ-ում

նոր հայտեր ներկայացնելու ու Գործարքներ կնքելու իրավունք: ԷՄՇ տվյալ մասնակցի կողմից Գործարքի շրջանակում վաճառողին ամբողջական կամ մասնակի վճարումներ կատարելու դեպքում տվյալ մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Շուկայի օպերատորին՝ ՇԿԾ-ի միջոցով ներկայացնելով վճարումը հաստատող փաստաթուղթ:

## ԳԼՈՒԽ 31 ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԻՑ (ՀԱՇԻՎՆԵՐԻՑ) ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

208. Երաշխավորված մատակարարը ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում գնված էլեկտրական էներգիայի դիմաց 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող Արտադրողների ու ԷՄՇ ծառայություններ մատուցողների օգտին վճարումների երաշխավորումն ապահովվում է Հատուկ հաշվի (հաշիվների) և Հանձնաժողովի հետ համաձայնեցված բանկային երաշխիքի միջոցով՝ անհրաժեշտ երաշխիքային գումարի չափով՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի վճարումն ապահովելու լրացուցիչ միջոց: Երաշխիքը կազմում է ոչ պակաս, քան նախորդ տարվա միջին ամսական գնված էլեկտրական էներգիայի (հզորության) և ԷՄՇ-ից ձեռք բերված **(բացառությամբ՝ Բաշխողի կողմից մատուցված)** ծառայությունների ընդհանուր գումարի 10 տոկոսը: Հատուկ հաշիվը (հաշիվները) սպասարկող բանկերի ընտրությունը համաձայնեցվում է Հանձնաժողովի հետ:
209. Հատուկ հաշվի (հաշիվների) սպասարկման պայմանագրերը և դրանցում, ինչպես նաև երաշխիքում կատարվող փոփոխությունները նախապես համաձայնեցվում են Հանձնաժողովի հետ:
210. Հատուկ հաշվի (հաշիվների) միջոցները կառավարվում են Կանոններին և Երաշխավորված մատակարարին տրված լիցենզիայի պայմաններին համապատասխան:
211. Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց Սպառողների կողմից կատարվող կանխիկ դրամական վճարումներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացած իրավաբանական անձանց (այսուհետ՝ վճարահաշվարկային կազմակերպություններ) կողմից, այդ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների հետ Երաշխավորված մատակարարի հետ կնքած պայմանագրերի հիման վրա: Համաձայն այդ պայմանագրերի՝ սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից մուտքագրված գումարներն առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցվում են Հատուկ հաշվին (հաշիվներին), բացառությամբ “Հայփոստ” փակ բաժնետիրական ընկերության կողմից հավաքագրված գումարների, որոնք Երևան քաղաքում՝ մեկ, այլ քաղաքային համայնքներում՝ մինչև երկու և գյուղական համայնքներում՝ մինչև հինգ բանկային օրվա ընթացքում փոխանցվում են Հատուկ

հաշվին (հաշիվներին): Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից մուտքագրված գումարները, բացի Հատուկ հաշվից (հաշիվներից), որևէ այլ բանկային հաշիվների չեն կարող փոխանցվել, ինչն ամրագրվում է բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների հետ Երաշխավորված մատակարարի կնքած պայմանագրերում: Այդ պայմանագրերը և հետագայում դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացվում են Հանձնաժողովի համաձայնեցմանը:

212. Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց բանկային փոխանցում իրականացնելու դեպքում սպառողները դրամական միջոցները փոխանցում են միայն Երաշխավորված մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում ներկայացված բանկային հաշվեհամարին, իսկ Երաշխավորված մատակարարը սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներին ներկայացվող հաշվարկային փաստաթղթերում, որպես բանկային հաշվեհամար, ամրագրում է միայն Հատուկ հաշիվներից կամ դրանց կից բացված տեխնիկական հաշիվներից (ենթահաշիվներից) որևէ մեկը:

213. Գնված էլեկտրական էներգիայի և ԷՄՇ-ից ձեռք բերված ծառայությունների դիմաց Երաշխավորված մատակարարի դրամային վճարումները կարող են իրականացվել միայն Հատուկ հաշվի (հաշիվների) միջոցով՝ Երաշխավորված մատակարարի վճարման հանձնարարագրերի հիման վրա:

214. Պայմանագրերով սահմանված ժամկետում Երաշխավորված մատակարարի կողմից վճարումներ չիրականացնելու դեպքում ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող Արտադրողները և ԷՄՇ ծառայություններ մատուցողները **(բացառությամբ՝ Բաշխողի)** կարող են դիմել երաշխիք տված բանկին՝ երաշխիքի սահմաններում իրենց պահանջները բավարարելու համար: Երաշխիք տված բանկն այդ անձանց կողմից ներկայացված դիմումները քննության է առնում և համապատասխան որոշում ընդունում 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ երաշխիքով սահմանված գումարը բավարար չէ ներկայացված դիմումներով պահանջվող և երաշխիք տված բանկի կողմից բավարարման ենթակա վճարումները կատարելու համար, Երաշխավորված մատակարարը պարտավոր է սույն կետում նշված՝ երաշխիք տված բանկի կողմից դիմումների քննության և համապատասխան որոշման ընդունման համար նախատեսված 5 աշխատանքային օրվա ընթացքում Հատուկ հաշիվը (հաշիվները) համալրել պակասող գումարի չափով և վճարել երաշխիք տված բանկին դիմումներ ներկայացրած անձանց՝ դիմումներով պահանջվող և բավարարման ենթակա մնացած (պակասող) գումարի չափով: Երաշխիք տված բանկի կողմից դիմումները բավարարվելու դեպքում Երաշխավորված մատակարարը 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում նոր երաշխիք:

215. Հատուկ հաշվին (հաշիվներին) մուտքագրվող գումարներն ամբողջությամբ, յուրաքանչյուր ամսվա 5-ից համարվում են գրավադրված ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում և ԿՈՒՊ բաղադրիչում 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող Արտադրողների և ԷՄՇ ծառայություններ մատուցողների **(բացառությամբ՝ Բաշխողի և ՀԾՄ-ի)** օգտին՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի

վճարումն ապահովելու միջոց, որն ամրագրվում է Երաշխավորված մատակարարի և այդ անձանց միջև կնքվող գրավի պայմանագրում (պայմանագրերում): Մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող Արտադրողները, ԵՐՊ, ՕԱԾ և ՀԱԾ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում այլ վաճառողները, ԷՄԾ ծառայություններ մատուցողներից բացի այլ ծառայություններ մատուցողները Երաշխավորված մատակարարի հետ գրավի պայմանագրեր չեն կնքում: Գրավի պայմանագիրը (պայմանագրերը), ինչպես նաև նրանում (նրանցում) կատարվող փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են Հանձնաժողովի հետ: Գրավադրման ընթացքում Հատուկ հաշվին (հաշիվներին) մուտքագրված գումարները ելքագրվում են նաև ներքին շուկայում վաճառելու նպատակով Երաշխավորված մատակարարի կողմից այլ անձանցից գնված էլեկտրական էներգիայի դիմաց վճարումներ կատարելու համար: Գրավադրումը դադարում է Երաշխավորված մատակարարի կողմից նախորդ ամսվա վերջի դրությամբ գրավառուների նկատմամբ առկա դրամական պարտավորությունների ամբողջական կատարումից հետո: Նշված գործառույթի իրականացումից հետո միայն Երաշխավորված մատակարարը կարող է տնօրինել Հատուկ հաշվում (հաշիվներում) առկա գումարներն ու փոխանցել միայն իր ընթացիկ հաշիվներին:

216. Հատուկ հաշվին (հաշիվներին) կարող են մուտքագրվել միայն սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից հավաքագրված կամ բացառապես Երաշխավորված մատակարարի ընթացիկ հաշիվներից փոխանցված գումարները, իսկ Հատուկ հաշվից (հաշիվներից) դրամական միջոցները կարող են ելքագրվել միայն ԵՐՊ, ՕԱԾ և ՀԱԾ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրական էներգիա վաճառողների և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար, կամ Կանոնների 215-րդ կետով սահմանված գրավադրման դադարեցման դեպքում՝ բացառապես Երաշխավորված մատակարարի ընթացիկ հաշիվներին:

217. Կանոնների 216-րդ կետում նշված դրույթներն ամրագրվում են Հատուկ հաշվի (հաշիվների) սպասարկման պայմանագրում (պայմանագրերում):

218. Երաշխավորված մատակարարը յուրաքանչյուր ամիս Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան, Հատուկ հաշվի (հաշիվների) գումարների շարժի մասին հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով:

# ԲԱԺԻՆ 9

# ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

## ԳԼՈՒԽ 32 ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

219. Սույն բաժնով կանոնակարգվում են ԷՄԾ-ում էլեկտրական էներգիայի հաշվառման հետ կապված հարաբերությունները:

220. ԷՄՇ-ում էլեկտրական էներգիայի Առևտրային հաշվառումը, Հաղորդման ցանցում փաստացի ռեժիմներով պայմանավորված էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկումը և Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի փաստացի կորուստների հաշվառումն իրականացնում է Շուկայի օպերատորը:

221. ԷՄՇ-ում էլեկտրական էներգիայի Առևտրային հաշվառումը Շուկայի օպերատորը կատարում է ԷՄՇ մասնակիցների՝ Հաղորդման և Բաշխման ցանցերի հետ ունեցած Սահմանազատման կետերի համար՝ այդ կետերում տեղադրված Հաշվառքի կետերից ստացված տվյալների հիման վրա: Ընդ որում, առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքում Շուկայի օպերատորն էլեկտրական էներգիայի Առևտրային հաշվառումը կատարում է ԷՄՇ պայմանագրում ամրագրված վերստուգիչ հաշվառքի սարքերից ստացված տվյալների հիման վրա:

222. Շուկայի օպերատորը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տվյալների հավաստիության համար:

223. ԷՄՇ մասնակիցներին պետք է հասանելի լինեն Հաշվառմանը վերաբերող իրենց բոլոր տվյալներն առնվազն վերջին երեք տարիների համար:

## ԳԼՈՒԽ 33 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

224. Հաշվառքի կետերից տվյալների հավաքագրումն իրականացնում է Շուկայի օպերատորը՝ ԷՀԱՀ-ի համակարգի միջոցով: Հաշվառման տվյալների նվազագույն չափման միավորը 1 կՎտժ-ն է, դրանից փոքր միավորները ենթարկվում են մաթեմատիկական կլորացման:

225. Հաշվառման տվյալների հավաքագրման նպատակով Շուկայի օպերատորն ապահովում է՝

1) ԷՀԱՀ-ի և օժանդակ ենթակառուցվածքների աշխատունակ վիճակը,
2) տվյալների հավաքագրումն Առևտրային հաշվիչներից դեպի համակարգային սերվեր,
3) Հաշվառման տվյալների ՇԿԾ-ում իրական ժամանակում արտացոլումն Առևտրային օրվա բոլոր ժամանակահատվածների համար:

226. ԷՄՇ մասնակիցներն ապահովում են ԷՀԱՀ-ում գրանցված Հաշվառքի կետերի հասանելիությունը և տվյալների անխոչընդոտ հավաքագրման հնարավորությունը Շուկայի օպերատորի կողմից, ինչպես նաև ապահովում են հաշվառման տվյալների հեռահաղորդակցության համար ծառայող սարքերի և սարքվածքների աշխատունակությունը:

## ԳԼՈՒԽ 34 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՄՈՏ

227. Արտադրողի առաքած էլեկտրական էներգիան հաշվառվում է յուրաքանչյուր կայանի համար առանձին: Առևտրային Հաշվառման համալիրը պետք է տեղադրվի համաձայն Հաղորդման ցանցային կանոնների պահանջների:

228. Շուկայի օպերատորը պարտավոր է Արտադրողի առաքած կամ սպառած էլեկտրական էներգիան հաշվառել՝
   1) Արտադրող-Հաղորդող Սահմանազատման կետում,
   2) Արտադրող-Բաշխող Սահմանազատման կետում,
   3) Արտադրող-սպառող Սահմանազատման կետում:
229. ԷՄՇ-ում ՊԷԱ կայանի Պայմանագրային հզորության Առևտրային հաշվառումը Շուկայի օպերատորը կատարում է համաձայն ՊԷԱ կայանի և Երաշխավորված մատակարարի միջև կնքված պայմանագրի: Պայմանագրային հզորությունները ենթակա են վճարման ՊԷԱ կայանի համար երկդրույք սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի դրույքի և հզորության ամսական վճարի սահմանման դեպքում: Եթե Հաշվարկային ժամանակահատվածի համար Համակարգի օպերատորի կողմից ներկայացված ՊԷԱ կայանի պատրաստ հզորությունների վերաբերյալ տեղեկատվության մեջ ամրագրված են փաստացի պատրաստ հզորության տարբեր մակարդակներ, ապա որպես վճարման ենթակա հզորություն հաշվառվում է դրանց միջին կշռույթային մեծությունը:
230. ՊԷԱ կայանի 2 Տնօրինելի հզորության սահմանափակումները համարվում են Պայմանագրային հզորության խախտում և համապատասխան չափով ենթակա չեն վճարման:

## ԳԼՈՒԽ 35 ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՀԱՂՈՐԴՈՂԻ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ՄՈՏ

231. Հաղորդողի հաղորդած էլեկտրական էներգիայի Հաշվառումը կատարվում է ինչպես Արտադրող-Հաղորդող, Հաղորդող-Որակավորված սպառող և Արտադրող-Բաշխող Սահմանազատման կետերում, այնպես էլ Ներկրման և Արտահանման կետերում, իսկ Բաշխողինը՝ Բաշխող-ԷՄՇ առևտրի մասնակից Սահմանազատման կետերում:
232. Շուկայի օպերատորը Հաղորդողի և Բաշխողի մոտ պարտավոր է հաշվառել.
   1) Ներկրման կետում ԷՄՇ մասնակիցների կողմից ներկրված էլեկտրական էներգիան,
   2) Արտահանման կետում ԷՄՇ մասնակիցներին հանձնված էլեկտրական էներգիան,
   3) Հաղորդող-Բաշխող Սահմանազատման կետում Բաշխողին հանձնված էլեկտրական էներգիան,
   4) Բաշխող-ԷՄՇ առևտրի մասնակից Սահմանազատման կետերում վերջինիս հանձնված էլեկտրական էներգիան:

## ԳԼՈՒԽ 36 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐԸ

233. Շուկայի օպերատորը Հաշվառքի կետերից ստացված տվյալների հավաստիության ստուգման նպատակով, Հաղորդման ցանցային կանոնների համաձայն, պարտավոր է կազմել ԷՄՇ առևտրի մասնակիցների ԷՀԱՀ-ում ներառված Հաշվառման համալիրներով ձևավորված հաշվեկշռային խմբի (կամ խմբերի) էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը:
234. Եթե կազմված փաստացի հաշվեկշիռը գերազանցում է վերջին մեկ տարվա միջին վիճակագրական տվյալների սահմանային արժեքներն առավել ևս անհաշվեկշռության թույլատրելի սահմանային արժեքները, ապա՝

1) Շուկայի օպերատորը պարտավոր է Գործարքի կողմերին տեղեկացնել փաստացի անհաշվեկշռույթի կտրուկ փոփոխության մասին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել փաստացի անհաշվեկշռույթի մեծության կտրուկ փոփոխության պատճառները պարզելու համար.
2) Գործարքի կողմերը Շուկայի օպերատորի մասնակցությամբ կատարում են ԷՀԱՀ-ում ներառված Հաշվառման համալիրներով ձևավորված հաշվեկշռային խմբի (կամ խմբերի) համար Հաշվառման համալիրների տեղազննություն՝ խափանումներ հայտնաբերելու դեպքում կազմելով համապատասխան ակտ.
3) Առևտրային Հաշվառման համալիրների խափանման ակտի առկայության դեպքում Շուկայի օպերատորը կատարում է վերահաշվարկ.
4) Առևտրային Հաշվառման համալիրի և դրանց միացման շղթաներում խափանում չհայտնաբերելու դեպքում փաստացի անհաշվեկշռույթի մեծության շեղումը միջին վիճակագրական տվյալներից (եթե փաստացի անհաշվեկշռույթի մեծությունը չի գերազանցում տվյալ Հաշվառման համալիրի հաշվեկշռային խմբի անհաշվեկշռության թույլատրելի սահմանային արժեքը) համարվում է ընդունելի՝ պայմանավորված ռեժիմների փոփոխություններով և վերահաշվարկ չի կատարվում.
5) Այն դեպքում, երբ փաստացի անհաշվեկշռույթի մեծությունը գերազանցում է անհաշվեկշռության թույլատրելի սահմանային արժեքը, սակայն տեղազննության արդյունքում Հաշվառման համալիրի և դրանց միացման շղթաների խափանում չի հայտնաբերվում, ապա Հաշվառման համալիրներ տնօրինողը պետք է իրականացնի Առևտրային հաշվիչների, հոսանքի և լարման տրանսֆորմատորների արտահերթ ստուգաչափումներ՝ կազմելով համապատասխան արձանագրություններ, անհրաժեշտության դեպքում փոխարինելով Հաշվառման համալիրները: Նշված արձանագրությունները հիմք են հանդիսանում վերահաշվարկի ակտի կազմման համար.
6) Վերահաշվարկն իրականացվում է վերստուգիչ հաշվիչներից ստացված տվյալների հիման վրա: Վերահաշվարկի արդյունքները ներառվում են խափանումը հայտնաբերելու ամսվան հաջորդող ամսվա վճարման փաստաթղթերում:

235. Անհաշվեկշռության թույլատրելի սահմանը որոշվում է Շուկայի օպերատորի կողմից՝ համաձայն Հաղորդման ցանցային կանոնների N1 Հավելվածի:

## ԳԼՈՒԽ 37 ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑՈՒՄ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

236. Շուկայի օպերատորը մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը պարտավոր է Հաղորդողին գրավոր տեղեկատվություն ներկայացնել Հաղորդման ցանցում նախորդ ամսվա համար հաշվառված էլեկտրական էներգիայի փաստացի կորուստների վերաբերյալ, ինչպես նաև այդ տեղեկատվությունը հրապարակել ՇԿԾ-ում:

237. Տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի համար Շուկայի օպերատորը, մինչև հաջորդ ամսվա 15-ը, Հաղորդման ցանցային կանոնների N1 Հավելվածի համաձայն,

պարտավոր է հաշվարկել Հաղորդման ցանցում փաստացի ռեժիմներով պայմանավորված էլեկտրական էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների մեծությունը, ներկայացնել Հաղորդողին և հրապարակել ՇԿԾ-ում:

## ԳԼՈՒԽ 38 ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

238. Յուրաքանչյուր ամսի առաջին երկու աշխատանքային օրերի ընթացքում Շուկայի օպերատորը՝ հիմք ընդունելով ԷՄՇ առևտրի մասնակիցների էլեկտրոնային հաշիվներում Կանոնների ԳԼՈՒԽ 15-րդ գլխով սահմանված տեղեկատվությունը, ՇԿԾ-ի միջոցով կազմում է վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտերը և ներկայացնում ԷՄՇ մասնակիցների հաստատմանը:

239. Վճարման ենթակա էլեկտրական էներգիայի գումարը և մատուցված ծառայությունների արժեքը հաշվարկվում են ՀՀ դրամով մեկ հարյուրերորդական միավորի ճշտությամբ՝ մաթեմատիկական կլորացմամբ:

240. ԷՄՇ մասնակիցները վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտի մասով առարկություն չունենալու դեպքում ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ՇԿԾ-ի միջոցով հաստատում են Շուկայի օպերատորի կողմից ներկայացրած վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտը:

241. ԷՄՇ մասնակիցները վճարման ենթակա էլեկտրական էներգիայի և մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտը հաստատելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում և մյուս կողմերին են ներկայացնում առաքված կամ գնված էլեկտրական էներգիայի կամ մատուցված ծառայությունների համար հաշվարկային փաստաթուղթ:

242. Հաշվարկային փաստաթուղթն ստացած ԷՄՇ մասնակիցն այն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է իրեն առաքված կամ իր կողմից գնված էլեկտրական էներգիայի, ինչպես նաև իր կողմից մատուցված կամ իրեն մատուցած ծառայությունների համար կազմված հաշվարկային փաստաթուղթը և երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում համապատասխան վճարումները, բացառությամբ Երաշխավորված մատակարարի: Երաշխավորված մատակարարը վճարումներն իրականացնում է մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը:

## ԲԱԺԻՆ 10

## ԷՄՇ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

### ԳԼՈՒԽ 39 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

243. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորը պատասխանատու են սույն բաժնով նախատեսված տվյալների հավաքագրման և իրենց կայք-էջերում հրապարակման համար՝ ապահովելով դրանց մշտական հասանելիությունը:

244. Համակարգի օպերատորը հավաքագրում և հրապարակում է՝

1) Առևտրային ժամանակահատվածում էլեկտրաէներգետիկական համակարգի բեռի մասին տեղեկատվություն, որը հրապարակվում է Շուկայի օպերատորից ստացված տվյալների հիման վրա.
2) էլեկտրաէներգետիկական համակարգի բեռի կանխատեսում՝ ըստ Առևտրային ժամանակահատվածների, որը հրապարակվում է ՕԱՇ-ի մուտքը փակվելուց առնվազն 14 ժամ առաջ և հետագայում անընդհատ թարմացվում է 2 ժամը մեկ անգամ.
3) էլեկտրաէներգետիկական համակարգի բեռի շաբաթ, ամիս, տարի-առաջ գումարային կանխատեսում, որը հրապարակվում է կանխատեսվող տվյալների հիման վրա: Տարի-առաջ էլեկտրաէներգետիկական համակարգի բեռի կանխատեսումը հրապարակվում է յուրաքանչյուր շաբաթ.
4) Հաղորդման ցանցի անպատրաստականության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է պատրաստականության փոփոխության պահից ոչ ուշ, քան մեկ ժամ հետո.
5) առկայության դեպքում գերբեռնվածության կառավարման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն.
6) ընդհանուր արտադրության ծավալի կանխատեսում՝ ըստ Առևտրային ժամանակահատվածների.
7) արտադրող ագրեգատների անպատրաստականության վերաբերյալ տեղեկատվություն,
8) վերականգնվող էներգիայի աղբյուրների կանխատեսում՝ ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների: Այդպիսի կանխատեսումները պետք է հրապարակվեն Առևտրային օրվա յուրաքանչյուր Հաշվարկային ժամանակահատվածի համար ՕՐԱՆ մինչև ժամը 08:59-ը ներառյալ:

245. Շուկայի օպերատորը հավաքագրում և հրապարակում է փաստացի առաքումն, ըստ Առևտրային ժամանակահատվածների (ըստ արտադրության տեխնոլոգիաների, եթե այդպիսի տվյալներ առկա են):

### ԳԼՈՒԽ 40 ՕԱՇ-Ի ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

246. ՕԱՇ-ում Շուկայի օպերատորը հավաքագրում և հրապարակում է՝

1) էլեկտրաէներգետիկական համակարգի բեռի մասին տեղեկատվությունը՝ ըստ Առևտրային ժամանակահատվածների,
2) Էլեկտրական էներգիայի առևտրի ծավալը՝ ՕԱԾ-ում,
3) ՕԱԾ-ի Քլիրինգային գինը՝ ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների,
4) Անհաշվեկշռույթի կարգավորման համար Կանոնների ԳԼՈՒԽ 26-րդ գլխի համաձայն որոշված գները՝ ըստ Հաշվարկային ժամանակահատվածների,
5) Անհաշվեկշռույթների ընդհանուր ծավալը՝ ըստ Հաշվարկային ժամանակահատվածների:

## ԲԱԺԻՆ 11

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

247. Կանոններն ուժի մեջ մտնելու պահին Երաշխավորված մատակարարի հետ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր ունեցող սպառողները (բացառությամբ՝ բնակչության) Կանոնների 249-րդ կետում սահմանված ժամկետներում ընտրում են Մատակարար կամ ստանում Որակավորված սպառողի կարգավիճակ:
248. Կանոնների 247-րդ կետի համաձայն Մատակարար չընտրելու կամ Որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու դեպքում սպառողները սպառած էլեկտրական էներգիայի համար Երաշխավորված մատակարարին վճարում են Հանձնաժողովի սահմանած սակագնով՝ Մանրածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն:
249. Կանոնների 247-րդ կետով սահմանված կարգավորումները Երաշխավորված մատակարարի հետ Կանոնների ուժի մեջ մտնելու պահի դրությամբ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր ունեցող Սպառողների (բացառությամբ՝ բնակչության) համար գործում են հետևյալ ժամկետներից.
    1) Հաղորդման ցանցին կամ Արտադրողին միացած բոլոր սպառողները՝ 2022 թվականի փետրվարի 1-ից,
    2) 110 կՎ և բարձր լարման բոլոր Սպառողները՝ 2023 թվականի փետրվարի 1-ից,
    3) 35 կՎ լարման այն Սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր Հաշվառման կետերում, տարեկան ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում՝ 2024 թվականի փետրվարի 1-ից,
    4) 6 (10) լարման այն Սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր Հաշվառման կետերում տարեկան ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում՝ 2025 թվականի փետրվարի 1-ից,
    5) Այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր Հաշվառման կետերում՝ անկախ լարման մակարդակից, տարեկան ունեցել են 1 մլն կՎտժ և ավելի սպառում՝ 2025 թվականի փետրվարի 1-ից:

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019
թվականի դեկտեմբերի 25-ի N516Ն որոշմամբ
հաստատված կանոնների

*(Բանկի ձևաթղթի վրա)*

*__.__.20__թ.*

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N __________

Սույն երաշխիքով (այսուհետ՝ Երաշխիք) _______________________ (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) ___________________-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) խնդրանքով անվերապահորեն պարտավորվում է Պրինցիպալի և ___________________-ի (այսուհետ՝ Բենեֆիցիար) միջև __.__.20__թ. կնքված ______________ պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Բենեֆիցիարի կողմից ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ Պահանջ) վերջինիս վճարել դրամական գումար՝ մինչև _________________ (_______________________) ______ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) հետևյալ պայմաններին համապատասխան:

1. Երաշխիքը հանդիսանում է Պայմանագրից բխող Պրինցիպալի վճարային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքը գործում է __.__.20__թ.-ից մինչև __.__.20__թ. ներառյալ:

3. *Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝*
   - ____________________
   - ____________________

4. Երաշխիք տվող անձը պարտավորվում է Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ աշխատանքային օրվա ընթացքում քննարկել Պահանջը և կից փաստաթղթերը՝ Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

5. Երաշխիքի գումարը կնվազեցվի Պահանջի արդյունքում Երաշխիք տվող անձի կողմից իրականացված յուրաքանչյուր վճարման գումարի չափով:

6. *Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:*

7. Երաշխիքի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Լիազորված անձ/ ստորագրություն